# «Առաջնահերթ պետք է որոշվի ԼՂՀ կարգավիճակը»

«Քանի դեռ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը բանակցությունների կողմ չէ, բոլոր տեսակի հանդիպումներն ու այցելությունները կրում են խորհրդակցական բնույթ»: Կազանում կայացած եռակողմ հանդիպման արդյունքները վերլուծելիս նման կարծիք հայտնեց Աժ-ում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ներկայացուցիչ **Գառնիկ Իսագուլյանը**:

Նրա մեկնաբանությամբ՝ կազանյան հանդիպումից որեւէ լուրջ ակնկալիք ունենալը իրատեսական չէր: Իսագուլյանի գնահատմամբ՝ եթե զինադադարից հետո 17 տարվա ընթացքում ղարաբաղյան խնդրի համար քաղաքական լուծում չի գտնվել, դա նշանակում է, որ այն պետությունները, որոնք ակտիվ մասնակցություն ունեն կոնֆլիկտի գործում, եւ հակամարտող կողմերը չեն գտել որեւէ լուծում, որը կբավարարի երկու կողմերին էլ»:

Իսագուլյանի մեկնաբանությամբ՝ զիջումների գնալու տեղ Հայաստանն այլեւս չունի. զիջումների տարբերակը հայկական կողմը փորձել է, սակայն դրական արդյունքի չի հանգել: «Կյանքը ցույց է տվել, որ զիջման դեպքում Ադրբեջանի դիրքորոշումն է՛լ ավելի է կոշտացել»:

Իսագուլյանի գնահատմամբ՝ հայկական կողմից զիջում էր, երբ 1998թ. Արցախը դուրս եկավ բանակցային գործընթացից: Հայաստանի կողմից ԼՂՀ անկախության դե յուրե չճանաչելը զիջում է: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի՝ 1995թ. խորհրդարանում Լեռնային Ղարաբաղից ընտրված պատգամավորների չլինելը նույնպես զիջում էր: «Մենք զիջում արել ենք ե՛ւ մինչեւ 1995թ., ե՛ւ դրանից հետո: Այսօր նորից գնալ զիջումների եւ մտածել, որ Ադրբեջանը կփոխի իր դիրքորոշումը, ճիշտ չէ, քանի որ վերջինս սպառազինության տենչը չի հագեցրել եւ շարունակում է ռազմատենչ հայտարարություններ կատարել»:

Այժմ Հայաստանը պետք է միջազգային հանրությանը ցույց տա, որ զիջում անելու տեղ չունի:

ՀՀ նախագահի ներկայացուցչի խոսքերով, խոսակցություններում շրջանառվող 7 շրջանները որեւէ փաստաթղթով ֆիքսված չեն, քանի որ նման զիջումը կբերի Ադրբեջանի՝ ստրատեգիական առումով ռազմական դիրքի լավացմանն ու ավելի ագրեսիվությանը:

Իսագուլյանի խոսքերով՝ առաջնահերթ պետք է որոշվի ԼՂՀ-ի կարգավիճակը. դրանից հետո կարելի է խոսել մնացած խնդիրների մասին:

Նա կանխատեսում է, որ մոտակա 2 տարվա ընթացքում հարցի լուծումը կգտնվի մեկուսի վիճակում: Նախընտրական շրջան է Հայաստանում, Ադրբեջանում եւ եռանախագահող երկրներում: «Եթե ինչ-որ բան էլ ստորագրվի, ապա՝ զինադադարի փաստաթուղթ, դրանից հետո ուրիշ փաստաթղթեր կարող են հայտնվել սեղանին»:

Իսագուլյանի գնահատմամբ՝ պատերազմի վերսկսման դեպքում Ադրբեջանը կպարտվի: Հայաստանը սպառազինությամբ ու մարտական հոգեբանության պատրաստվածությամբ չի զիջում Ադրբեջանին:

Փորձագետ **Ռիչարդ Կիրակոսյանի** կարծիքով էլ Կազանի հանդիպումը Հայաստանի եւ Ադրբեջանի վերջին հնարավորությունն էր՝ լուծելու ղարաբաղյան հարցը: Նա համոզված է, որ Մինսկի խմբի ձեւաչափը պետք է փոփոխության ենթարկվի:

«ԵՄ-ը ջանքեր է գործադրում աջակցել Մինսկի խմբին՝ միաժամանակ չգրավելով նրա տեղը: Ամեն դեպքում ԵՄ որոշ ներկայացուցիչներ ցանկանում են փոխարինել Մինսկի խմբի որոշ ներկայացուցիչների՝ հատկապես Ֆրանսիայի համանախագահին: Եվրոպայում մտածում են նաեւ բանակցային գործընթացում ներգրավել ԼՂՀ-ն: Այդ առումով բանավեճեր են ընթանում, սակայն վերջնական արդյունք դեռեւս չկա»:

Կիրակոսյանի գնահատմամբ՝ Ադրբեջանը գիտակցում է, որ թեպետ վերջին տարիներին ավելացնում է սեփական սպառազինության ծախսերը, սակայն պատերազմում պարտություն է կրելու:

Վտանգը պատահական պատերազմի հավանականության մեջ է, ինչպես դա պատահեց 2008-ին Հարավային Օսիայում՝ սխալ հաշվարկների պատճառով:

Հ. Հ.

# ԱՊՀ գլխավոր դատախազների համակարգող խորհուրդն Ադրբեջանին առաջարկել է ...

*1-ին էջից*

Տեղեկատվության մեջ հիշեցվում է, որ որ 2010թ. նոյեմբերի 4-ին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հովանու ներքո Հայաստան է վերադարձվել 2010թ. հոկտեմբերին Բաքու քաղաքում սպանված Հայաստանի Հանրապետության քաղաքացի Մանվել Մամիկոնի Սարիբեկյանի դիակը: Հայաստանի Հանրապետության ոստիկանության Ճամբարակի քննչական բաժնում 2010թ. նոյեմբերի 5-ին հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 5-րդ եւ 13-րդ կետերով (ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթներով կատարված սպանություն): Սույն քրեական գործի նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությանը:

Քննության օբյեկտիվությունը, բազմակողմանիությունը եւ ամբողջությունն ապահովելու համար, առաջնորդվելով 22.01.1993թ. կնքված «Քաղաքացիական, ընտանեկան եւ քրեական գործերով իրավական օգնության մասին» Մինսկի կոնվենցիայով՝ ՀՀ գլխավոր դատախազը 2010թ. դեկտեմբերի 14-ի գրությամբ դիմել է Ադրբեջանի Հանրապետության գլխավոր դատախազ պարոն Զաքիր Գարալովին՝ վերը նշված քրեական գործի քննությանն աջակցելու ակնկալիքով: Ադրբեջանի դատախազությունը չի արձագանքել ՀՀ գլխավոր դատախազության գրավոր հարցմանը: Նկատի ունենալով, որ հարցման պատասխանը էական նշանակություն ունի քրեական գործով նախաքննության լրիվությունը ապահովելու համար ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը 2011 թվականի ապրիլի 5-ին նամակով դիմել էր նաեւ ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի նախագահ, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազ Յուրի Չայկային՝ խնդրելով աջակցել գրության պատասխան ստանալուն: Համակարգող խորհուրդն արձագանքել է ՀՀ գլխավոր դատախազի գրությանը եւ առաջարկել Ադրբեջանի դատախազությանը քննարկել կոնկրետ քրեական գործով իրավական փոխօգնության վերաբերյալ Հայաստանի գլխավոր դատախազության հարցումը եւ արդյունքների մասին տեղեկացնել ինչպես համակարգող խորհրդին, այնպես էլ Հայաստանի գլխավոր դատախազությանը՝ հնարավորինս սեղմ ժամկետներում:

Մ. Խ.

# Տեր-Պետրոսյանի ասածներին կհավատայինք, եթե ...

*1-ին էջից*

**ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբյանի աչքին էլ երեւում է, որ ժողովուրդը հեռանկար չի տեսնում եւ ծայրահեղ գործողությունների պատրաստ է: Նա վիճակը չշտկվող անվանեց, առողջացումը՝ օլիգարխիայի շահերին հակասող, իշխանությունը արտաքին վարկային աջակցության հույս եւս չունի, իսկ Ղարաբաղի հարցում փաստաթղթի ստորագրումը հղի է վտանգներով: Այնպես որ՝ իշխանության համար փակուղի է, եւ նա ստիպված է երկխոսում ընդդիմության հետ: Իսկ իշխանության ժամանակ ձգելու եւ սեզոնային գործոնով ՀԱԿ-ի ճնշումը նվազեցնելու մղումը զուրաբյանականները հասկանում են եւ դա թույլ չեն տա՝ երկխոսության եւ բուն բանակցությունների համար իշխանությանը տալու են կոնկրետ ժամանակ, որը սպառվելուց հետո, արդյունք չլինելու դեպքում, ժողովուրդը հավաքվելու եւ մնալու է այնքան, մինչեւ իշխանությունը հեռանա: Մնում է Զուրաբյանին հարցնել, որտե՞ղ տեսավ ժողովուրդ, հանրահավաքավորը անցած նվազ հանրահավաքավորից կրկնակի քիչ էր: «Գրի հրամանագիր, ներկայացրու էդ մարդկանց որպես բանագնաց, ու կգանք, կբանակցենք», ասաց Արամ Սարգսյանը Սերժ Սարգսյանին՝ նախագահ Սարգսյանի վերջին ուղերձի առիթով:**

**Տեր-Պետրոսյանն անդրադարձավ միայն երկխոսելու եւ մարտի 1-ի թեմային, Կազանի հանդիպումը չվերլուծեց՝ մինչեւ անհրաժեշտ տեղեկություններ ունենա, եւ, բացի այդ, որեւէ լուծում ՀԱԿ-ի համար ընդունելի կլինի, եթե այն կընդունի Ղարաբաղը: Մարտի 1-ի զոհերի սպանության քննության ակտիվացումը, կամ այն, ինչ տեղի է ունենում Սերժ Սարգսյանի հայտնի հայտարարությունից հետո, Տեր-Պետրոսյանին չի բավարարում, եւ այժմ ՀԱԿ-ն իր ուշադրությունը կենտրոնացնելու է մարտի 1-ի հետաքննության վրա: Նա նշեց, թե Սերժ Սարգսյանն ինչ-որ պատճառներով չի կարողանում կողմնորոշվել երկխոսության հարցում, բայց անորոշությունը կհաղթահարվի շուտով՝ նրա շրջապատն է անսովոր, նրանք միայն կրակելու, բանտ նետելու են սովոր: Նախագահ Սարգսյանի ՝ երկխոսության համար տված անունների առումով Տեր Պետրոսյանը միայն հիշեց Տիգրան Սարգսյանի անունը՝ ավելացնելով. «Մյուսն ո՞վ էր», հետո էլ ասաց, թե կենդանաբանությամբ չի զբաղվում: Նրա կարծիքով իշխանությունը վաղ թե ուշ պատվիրակության մակարդակով բանակցելու է ՀԱԿ-ի հետ, իսկ վարկանիշի առումով կորցնողն իշխանությունն է, մեծ հաշվով՝ ժողովուրդն ու երկիրը: Նա էլի կրկնեց՝ սահմանադրական կարգի հաստատում եւ արտահերթ ընտրություններ մաղթեց, որ ողջախոհությունը չդավաճանի ավազակախմբի պարագլուխներին եւ նրանք առաջիկա մեկ-երկու ամսում կողմնորոշվեն արտահերթ ընտրությունների հարցում: Թե չէ՝ ի՞նչ... սեպտեմբերին երկխոսություն պահանջելու ժամկետը ավարտված կհամարեն, եւ կմնա մեկ պահանջ՝ Սերժ Սարգսյանի հրաժարականը:**

**Անեկդոտը, կարծում ենք, բոլորը հիշեցին: Երկու ընկեր ընկնում են փոսն ու չեն կարողանում մինչեւ ուշ երեկո դուրս գալ: Կեսգիշերին տանջահար ընկերներից մեկն ասում է. «Վերջին անգամ եմ փորձում՝ դուրս չեկա, գնում եմ տուն»: Մի խոսքով՝ այս բոլորին կհավատայինք, եթե «Ազատության» հրապարակում ժողովուրդ լիներ:**

Մ. Խ.

ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ

# Մանկավարժական համալսարանն ու Մեցի համալսարանը համագործակցում են

**Երեկ Հայկական պետական մանկավարժական համալսարանում կնքվել է պայմանագիր Մանկավարժական համալսարանի ու ԳԱԱ-ի Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի միջեւ: Պայմանագրի համաձայն՝ այսուհետեւ մանկավարժական համալսարանն աճեցնելու է արհեստական բյուրեղներ եւ Ֆրանսիայի Մեցի համալսարանի հետ Մանկավարժական համալսարանը ստեղծելու է լաբորատորիա: Մեցի համալսարանի պրոֆեսոր Միշել Ալիերի փոխանցմամբ՝ լաբորատորիայի ստեղծումն ու արհեստական բյուրեղներ աճեցնելու նախաձեռնությունը կրթությունը գիտությանը մոտեցնելու լավագույն քայլերից են:**

**Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն էլ նշեց, որ այսպես ուսանողներին հնարավորություն կտրվի ընդգրկվելու նաեւ գիտահետազոտական գործունեության մեջ:**



**Երեկ Մանկավարժական համալսարանում ստորագրվեց նաեւ «Ֆոտոնիկական, ժամանակակից նյութեր ֆոտոնիկայի ու օպտիկական սենսորների համար» հայ-ֆրանսիական լաբորատորիայի ստեղծման նախագիծ:**

Ի. Պ.

# ՀՀԿ-ն նոր պատգամավոր ունի՝ Համլետ Զաքարյանը

**Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր երեկվա նիստում, պետգույքի կառավարման վարչության պետ նշանակված եւ ԱԺ պատգամավորի լիազորությունները վայր դրած Արման Սահակյանի փոխարեն, ԱԺ համամասնական ընտրակարգով Հանրապետական կուսակցության ընտրացուցակի հերթական հորիզոնականը զբաղեցնող Համլետ Ավետիսի Զաքարյանին է փոխանցել պատգամավորական մանդատը: Համլետ Զաքարյանը Երեւանի էկոլոգիայի, տնտեսագիտության եւ իրավունքի հայկական ինստիտուտի ռեկտորն է, Ռուսաստանի Դաշնության էկոլոգիական եւ հումանիտար ակադեմիաների ակադեմիկոս, պրոֆեսոր է:**

# «Նաիրիտի» գլխավոր տնօրենը հրաժարական է տվել

**«Նաիրիտ գործարան» ընկերությունից ստացված հաղորդագրության համաձայն, հունիսի 27-ին տեղի ունեցած ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում բավարարվել է գլխավոր տնօրեն Վահան Մելքոնյանի՝ պաշտոնից հրաժարականի դիմումը: Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել փոխտնօրեն Հովիկ Հախինյանը:**

Ա. Մ.

## ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգի» խմբագրությունը խորապես ցավակցում է իր նախկին աշխատակցին՝ գրող-հրապարակագիր Սերգեյ Գալոյանին՝ նրա սիրելի մոր՝ **Սիրանուշի** մահվան տխուր առիթով:

# Մասոնական «Մեծ Արեւելքի» ներկայացուցիչը ժամանում է Երեւան

**Երեկ լրատվական կայքերը տեղեկություն էին տվել, թե հուլիսի 4-ին Երեւան է ժամանում ֆրանսիական մասոնական ամենամեծ՝ Grand orient («Մեծ Արեւելք») օթյակի վարպետ Գի Արսիզեն: Այս լուրի սկզբնաղբյուրը ֆրանսիական այդ մասոնական օթյակի հայաստանյան ներկայացուցչությունն է: «Մեծ Արեւելքի» ներկայացուցիչը, ըստ այդ տեղեկատվության, բացի Հին Արեւելքի տեղական ներկայացուցիչներին հանդիպելուց, կայցելի նաեւ Ցեղասպանության զոհերի հուշահամալիր եւ թանգարան, իսկ հուլիսի 6-ին հանդես կգա մամուլի ասուլիսով: Այս օթյակը մոտ 60 հազար անդամ ունի՝ 1250 դուստր օթյակների ցանցում եւ Եվրոպայում ամենախոշորն է համարվում: Նշենք, որ հաճախ է մամուլ տեղեկատվություն տարածվում առ այն, որ Հայաստանի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ այդ օթյակի անդամ են:**

Մ. Խ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Գեւորգ Բարդաքչյան. «Սոված արջը չի պարում»



Ի՞նչն է պակասում Սփյուռք-Հայաստան կապերին. «Սերտացնել հարաբերությունները զանազան միջոցներով, նոր կազմակերպությունների կարիքը չկա այդ սերտացման համար՝ ժողովրդի համար ուղղակի պետք է այնպիսի պայմաններ ստեղծել, որ դրսից գան, մասնակցեն Հայաստանի կյանքին: Այնպես անել, որ բիզնեսով զբաղվողները չասեն՝ բիզնեսի համար հարմար պայմաններ չկան, օրենքի ուժ չկա, դատարաններն արդար չեն ու միշտ տեղացիների կողմն են բռնում», ահա այսպես էր **«Ազգ»-ի** հետ զրույցում բարձրաձայն մտածում անվանի հայագետ, Միչիգանի համալսարանի Մարի Մանուկյանի անվան հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի պրոֆեսոր **Գեւորգ Բարդաքչյանը**: Նա ասում էր, որ հայերս, հատկապես մշակույթի, գրականության եւ գիտության մարդիկ, պետք է բացվենք դեպի լայն աշխարհ. «Մենք նորից կղզիանում ենք, մեր լոպազությունն ենք անում՝ հայն այսպես ու այսպես է եղել: Նեղ-ազգայնական մոտեցումներից պետք է դուրս գալ համաշխարհային լայն ասպարեզ, լեզու իմանալ, թարգմանել մեր գրականությունը, հայտնի արվեստագետների հրավիրել, թարգմանիչների հրավիրել, դարձնել Հայաստանը աշխարհի ուշադրության արժանի կենտրոններից մեկը մշակույթի առումով: Եթե ճիշտ աշխատենք, փողն էլ դրսից կճարվի: Ուզում եմ, որ կայունանան երկիրը եւ մշակույթը: Իհարկե, էկոնոմիկան խիստ կարեւոր է, մարդիկ պետք է կարողանան իրենց հացը վաստակել գոնե, որպեսզի ուրիշ բաներով եւս զբաղվեն: Սոված փորով արջը չի պարում»:

Ցեղասպանության խնդիրը Սփյուռքում միակն է, ըստ Բարդաքչյանի, որ համարյա միշտ միացնում է. «Երբեմն դա էլ չի միացնում, որովհետեւ հավերժական խնդիր է՝ ո՞վ պիտի խոսի առաջ, ո՞վ՝ հետո: Որ ասում են ընտրություն անենք, յուրաքանչյուր 20 հազար սփյուռքահայ մեկ ներկայացուցիչ ունենա, կենտրոնական խորհուրդ կազմեն՝ Հարութ Սասունյանն էր առաջարկում, իմ կարծիքով, նախ, դա ուտոպիա է, եւ հետո՝ այդպիսի բան հնարավոր չէ անել, կուսակցությունները թույլ չեն տա: Կուսակցությունները եթե իրենք իշխող դիրք չունենան՝ ամեն մի բանի դեմ կլինեն: Օրինակ, ասում են՝ եթե Ցեղասպանությունը Թուրքիան ճանաչի, պիտի դիմենք մեր իրավունքները պաշտպանելու. ո՞վ է դիմելու, ո՞վ է խոսելու Սփյուռքի անունից: Այդ հարցը որ տալիս եմ, պատասխաններ են հնչում, թե մենք պետք է միանանք, բայց թե ինչպե՞ս: Կամ արդյո՞ք Հայաստանի կառավարությունն էլ իրավունք ունի մեզ ներկայացնելու: Խորհրդարանի վերին պալատ ստեղծելու գաղափարը կամ, որն, ըստ իս, ոչ գործնական բան է, չի լինի, քանի որ ո՞վ է որոշելու վերին պալատ գնացողին: Հետո՝ պարզ չէ, թե ի՞նչ դեր պիտի խաղան խորհրդարան գնացողները, հասկանալի չէ»:

Գեւորգ Բարդաքչյանի հետ մեր զրույցը հայագիտությանը եւ ապա Սփյուռքին առնչվող շատ խնդիրներ շոշափեց, այդ մասին հրապարակումը կներկայացնենք «Ազգ»-ի առաջիկա համարներից մեկում: Նշենք միայն, որ պրոֆեսորը եկել է մասնակցելու այսօր բացվող «Իրան եւ Կովկաս» միջազգային գիտաժողովին, որը կազմակերպվել է «Իրան եւ Կովկաս» պարբերականի 15-ամյակի առիթով: Այս պարբերականը միջազգային մակարդակով գրախոսվող, գիտական շրջանակներին հայտնի, անգլերեն, ֆրանսերեն եւ գերմաներեն տպագրվող արեւելագիտական պարբերական է: Գիտաժողովին մասնակցելու համար Երեւան են ժամանել արտերկրի մոտ 50 անվանի գիտնականներ աշխարհի հայտնի իրանագիտական, կովկասագիտական, ընդհանրապես՝ արեւելագիտական կենտրոններից: Մեր արեւելագետներն ու իրանագետները նույնպես մասնակցելու եւ զեկուցումներ են ունենալու: Գ. Բարդաքչյանի զեկուցումը վերաբերելու է հայերենում փոխառնված բառերին՝ արաբերենից, պարսկերենից, թուրքերենից, հատկապես այն դեպքերում, երբ հայերենն ունի համապատասխան բառեր: Նա ցույց է տալու, թե ինչպե՞ս է փոխառությունն ազդում մտածելակերպի եւ մշակույթի վրա: Զեկուցման ընդհանրացումների համար հետաքրքրական օրինակ է վերցրել՝ ցույց տալով թարգմանության աղավաղման բացասական անդրադարձը: Սայաթ Նովայի «Աշխարհս մե փանջարա է» պոեմի թարգմանության դիտարկումները պարզել են, որ ե՛ւ անգլերեն, ե՛ւ ռուսերեն, ե՛ւ այլ թարգմանություններում «փանջարան» թարգմանվել է «պատուհան», բայց Սայաթ-Նովան նկատի է ունեցել, որ աշխարհը մի վանդակ է, փակ տարածք, որտեղից բլբուլն ուզում է դուրս փախչել: Այսինքն՝ այդպիսի թարգմանություններով պոեմն անիմաստ է դարձել. «Ես խոսելու եմ թարգմանության կարեւորության մասին, եւ թե ինչպես են լեզու չիմացողները սխալ թարգմանելիս կոնտեքստը փոխում: «Փանջարան» պարսկերեն բառ է, առաջին նշանակությամբ վանդակ է թարգմանվում, երկրորդ նշանակությամբ՝ փակված, երրորդ՝ պատուհան: Ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, արաբերեն թարգմանությունների մասին եմ խոսելու, որոնք բոլորը սխալ թարգմանություն են, եւ ուրիշ օրինակների, ընդհանրապես՝ փոխառյալ բառերի մասին եմ խոսելու Երեւանի համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի եւ իրանագիտության ամբիոնի կազմակերպած «Իրան եւ Կովկաս» գիտաժողովում»:

Ընթերցողին հետաքրքրելու համար ասենք, որ պրոֆեսոր Բարդաքչյանը խոշորածավալ եւ արժեքավոր աշխատությունների կողքին՝ նաեւ ուսումնասիրել եւ հեղինակել է փաստագրական գիրք այն մասին, թե որտե՞ղ, ի՞նչ առիթով ու ե՞րբ է ասել Ադոլֆ Հիտլերը «Հիմա ո՞վ է հիշում հայերի ցեղասպանությունը» խոսքերը: Այդ մասին՝ մեր առաջիկա հրապարակման մեջ:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՄՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՀԵՏՔԵՐՈՎ

# Հայաստանից թրաֆիքինգի հիմնական ուղղություններն են՝ Թուրքիա, Արաբական Միացյալ Էմիրություններ եւ Գերմանիա

**Հունիսի 27-ին հրապարակված զեկույցում ԱՄՆ պետդեպարտամենտը նշել էր, որ Հայաստանի կառավարությունն ամբողջությամբ չի բավարարում թրաֆիքինգի վերացման նվազագույն ստանդարտները, սակայն այդ ուղղությամբ զգալի աշխատանքներ կատարվել են: Պետդեպարտամենտը դրական էր համարել, որ 2010-ից կառավարությունը մասնակի ֆինանսավորում է ապահովել թրաֆիքինգի զոհերի ապաստարանին եւ ուսուցումներ է անցկացրել պաշտոնյաների համար: Թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային խորհրդին կից աշխատանքային խմբի ղեկավար Վահրամ Կաժոյանը երեկ մեկնաբանել է ԱՄՆ պետդեպարտամենտի՝ թրաֆիքինգի վերաբերյալ զեկույցը: Կաժոյանի գնահատմամբ՝ զեկույցի առումով Հայաստանի ակնկալիքներն արդարացել են:**

**«Ակնկալվում է, որ Հայաստանը պետք է պահպանի իր դիրքը երկրորդ խմբում, աշխատանքները կատարվել են բավարար մակարդակով, աշխատանքների նման ձեւով շարունակվելու դեպքում Հայաստանը շուտով կարող է տեղափոխվել առաջին խումբ»:**

**Կաժոյանի փոխանցմամբ՝ Հայաստանում թրաֆիքինգի զոհերի համար «Ամքոր» եւ «Հույս եւ օգնություն» կազմակերպություններում գործում է 2 ապաստարան: Կառավարությունն անցյալ տարի վերոնշյալ կազմակերպություններին հատկացրել է 6 միլիոն 200.000 դրամ գումար:**

**Պետդեպարտամենտի զեկույցում նշվում էր, որ առանձնակի մտահոգության տեղիք է տալիս տարվա ընթացքում բացահայտված զոհերի կտրուկ անկումը, ինչպես նաեւ հարկադիր աշխատանքի հետ կապված դեպքերի քննությունների բացակայությունը: «Մտահոգություն կառաջանա միայն այն դեպքում, եթե դեպքերը եղել են, ու բավարար քանակությամբ ոստիկանական հետաքննություն չի անցկացվել, բայց երբ դեպքերը քիչ են եղել եւ ուշադրության են արժանացել համապատասխան մարմինների կողմից, միայն ողջունելի է», ասաց Կաժոյանը:**

**Պետդեպարտամենտի ներկայացրած տվյալների համաձայն՝ անցյալ տարի թրաֆիքինգի համար դատապարտվել է 5 մարդ, որից 4-ը՝ սեռական, իսկ 1-ը աշխատանքային թրաֆիքինգի համար, մինչդեռ 2009-ին դատապարտյալների թիվը 11-ն էր: 2010-ին թրաֆիքինգի համար դատապարտված անձանցից որեւէ մեկը վաղաժամկետ ազատ չի արձակվել:**

**Անդրադառնալով պետքարտուղարության զեկույցում ներկայացված թրաֆիքինգի հիմնական ուղղություններին՝ Կաժոյանն ասաց, որ նախորդ տարիների համեմատ փոփոխության չեն ենթարկվել՝ Արաբական Միացյալ Էմիրություններ, Թուրքիա եւ Գերմանիա: Թրաֆիքինգով զբաղվող հանցավոր խմբերը վերոնշյալ 3 ուղղությունն օգտագործում են կանանց սեռական շահագործման նպատակով:**

Հ. Հ.

# Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմում ծխական նոր համայնքներ են ստեղծվում

**Հունիսի 26-ին Սանկտ-Պետերբուրգում Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս Եպիսկոպոս Ներսիսյանի գլխավորությամբ տեղի է ունեցել հոգեւորականների տարեկան հաշվետու ժողով:**

**Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի մամլո դիվանի փոխանցմամբ՝ թեմի հոգեւոր կյանքի աշխուժացման մեջ որպես կարեւոր ձեռքբերում սրբազան հայրը մասնավորել է եկեղեցաշինությունը: Որպես ասվածի օրինակ տեր Եզրասը ներկայացրել է մայիսին Դոնի Ռոստովում Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ձեռամբ օծված Սուրբ Հարություն եկեղեցին: Եկեղեցին կառուցվել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տեղում, որը քանդել էին համայնավարները 1965թ.:**

**Շուտով կօծվեն նաեւ Եկատերինբուրգի, Վլադիվոստոկի եկեղեցիները, Մոսկվայի հայկական եկեղեցական համալիրի շինարարական աշխատանքներն էլ բարեհաջող փուլում են: Շինարարական աշխատանքների սկսման փուլում են նաեւ Մոսկվայի Պոկլոննայա Գորայում նախատեսված Մեծ հայրենականի եւ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող Սրբոց Նահատակաց հայկական եկեղեցու կառուցումը:**

**«Եկեղեցիները լի են հավատացյալներով ոչ միայն տոն օրերին: Մարդիկ գալիս են եկեղեցի՝ խաղաղություն եւ մխիթարություն գտնելու, քահանայի հետ խորհրդակցելու», ասել է սրբազան հայրը՝ հավելելով, որ թեմում ստեղծվում են ծխական նոր համայնքներ եւ բազմաթիվ քաղաքներ քահանաների կարիք են զգում:**

Հ. Հ.

# Անշարժ գույքի գները ցածր են հետճգնաժամային 2009-ի գներից

*Անիմաստ է ակնկալել դրանց նկատելի բարձրացումն այս պահին*

Մեր թերթի մայիսի 28-ի համարում «Անշարժ գույքի շուկան լճացած վիճակում է» հրապարակման մեջ անդրադարձել էինք կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության մայիս ամսվա տվյալներին, ներկայացրել գործարքների քանակական եւ գնային ցուցանիշները: Ամփոփելով արձանագրված ցուցանիշները՝ եզրակացրել էինք, որ այս պահին անշարժ գույքի շուկան լճացած վիճակում է: Սակայն անհրաժեշտություն կա փոքր-ինչ ավելի հանգամանալից ներկայացնելու անշարժ գույքի շուկայի կացությունը երկրի ընդհանուր տնտեսական իրավիճակի համատեքստում, պահանջարկի եւ առաջարկի հարաբերակցության հարցերը, այս շուկայում առկա միտումներն ու հավանական զարգացումները:

Հայաստանում անշարժ գույքի շուկան արագ տեմպերով սկսեց զարգանալ 2003-2004-ից, ինչը պայմանավորված էր 2000-ից սկսված երկրի տնտեսական աճի բարձր տեմպերով եւ այդ աճի մեջ շինարարության ունեցած որոշիչ մասնաբաժնով: Հարկ ենք համարում մեկ անգամ եւս ընդգծել, որ առնվազն տարօրինակ է, երբ բացասական երեւույթ է համարվում շինարարության աճն այդ տարիներին: Ընդ որում, չնայած շինարարության նման ծավալներին, Հայաստանում կառուցապատման շատ ավելի մեծ ծավալների անհրաժեշտություն եւ պահանջարկ կա նաեւ հիմա: Ինչեւէ:

Շինարարության աճը եւ անշարժ գույքի գների աճը շարունակվեցին մինչեւ 2008-ի տարեվերջ: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից ամենից շատ տուժեց շինարարությունը, ինչի հետեւանքով կտրուկ իջան նաեւ անշարժ գույքի գները՝ մոտ 25-30 տոկոսով: 2009-ի ընթացքում գների անկումը կանգ առավ եւ կայունացավ մինչ ճգնաժամայինից 25-30 տոկոսով ցածր գների վրա: Նորակառույց բնակարանների գները գրեթե չնվազեցին, ինչը վկայում է, որ, ինչպես արդեն նշեցինք վերեւում, բարձր պահանջարկը նորակառույց բնակելի, ինչպես նաեւ այլ շինությունների նկատմամբ պահպանվում է:

2010-ի ընթացքում անշարժ գույքի շուկան որոշ չափով աշխուժացավ: Ամսական արձանագրվում էր միջինը 0,5-1 տոկոսի աճ: Սակայն այդ գործընթացը շատ փխրուն էր եւ ամրապնդված չէր ընդհանուր տնտեսական եւ շինարարության ծավալների բարձր աճի տեմպերով: Չնայած պահանջարկի առկայությանը, ճգնաժամի հետեւանքով բնակչության մեծ մասի գնողունակության անկումը հարկադրեց նոր բնակարան ձեռք բերելու ցանկություն ունեցողներին առժամանակ հետաձգել դա իրագործելը: Արդյունքում, անցյալ տարի անշարժ գույքի շուկան մի տեսակ իներցիոն զարգացման մեջ էր, որն ինչ-որ պահի պետք է կանգ առներ:

2011-ի սկզբներին իներցիոն ընթացքը կանգ առավ, եւ գները սկսեցին դանդաղ նվազել: 2010-ի տարեկան արձանագրված 6-10 տոկոս միջին գների աճն արդեն ի չիք դարձավ: Ներկայումս բոլոր ցուցանիշներով, այս տարվա մայիսի գները մոտ 8-10 տոկոսով ցածր են անցյալ տարվա մայիսի գներից: Ընդ որում, ինչպես Երեւանում, այնպես էլ մարզերում, ինչպես բնակարանների, այնպես էլ անհատական տների դեպքում: Ավելին, այս տարվա մայիսին անշարժ գույքի գները հետճգնաժամային 2009-ի մայիսի գներից էլ ցածր են: Խոսքը փաստացի առքուվաճառքներով ձեւավորված միջին գների մասին է: Սա կարող է անհավատալի թվալ շատերին, քանի որ շուկայում անշարժ գույք վաճառողների եւ գնորդների վարքագիծը բոլորովին չի համապատասխանում ստեղծված իրավիճակին:

Անշարժ գույք գնել ցանկացողները բախվում են շուկայի տրամաբանությանը չհամապատասխանող առաջարկի բարձր գներին: Շատերը կամ հետաձգում, կամ էլ հրաժարվում են գնելու մտադրությունից: Սրան ավելանում են գործարք կատարելու ցանկություն ունեցողների մեծ մասի սպասողական տրամադրությունները: Վաճառողները սպասում են գների բարձրացմանը, գնորդները՝ իջնելուն: Յուրաքանչյուրը վստահ է, որ տեղի է ունենալու հենց իր ցանկալի զարգացումը: Նրանք սպասում են, իսկ գործարքները կատարողները ձեւավորում են ներկայիս շուկայական գները:

Անշարժ գույքի շուկայում ներկայիս լճացած իրավիճակը նկատի ունենալով՝ ի՞նչ կարելի է սպասել առաջիկայում: Այս շուկայում առաջիկայում դժվար թե կտրուկ զարգացումներ տեղի ունենան: Տնտեսական անկման դեպքում անշարժ գույքի շուկան շատ արագ է արձագանքում: Սակայն տնտեսության ընդհանուր աճի դեպքում անշարժ գույքի շուկայի արձագանքն ավելի ուշ է գալիս: Ինչպես արդեն նշեցինք, 2000-ից սկսված տնտեսական բարձր աճին անշարժ գույքի շուկայի զարգացումը հետեւեց 3-4 տարի հետո, այն էլ շինարարության բուռն զարգացման պարագայում: Ներկայումս Հայաստանի տնտեսական աճի տեմպը դեռ այնպիսին չէ, ինչպիսին 2000-ականներին էր: Բացի դրանից, շինարարության մեջ զարգացում չկա: Հետեւաբար, օբյեկտիվորեն, անշարժ գույքի շուկայում որոշ ժամանակ կպահպանվեն ներկայիս գները՝ չնչին փոփոխություններով: Այսինքն՝ անիմաստ է ակնկալել դրանց նկատելի բարձրացումն այս պահին: Ընդհանուր տնտեսական աճի շարունակման պարագայում միայն դրանք կսկսեն ավելի արագ տեմպերով բարձրանալ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## Կազանից հետո

# Ո՞ւր են ադրբեջանցիների փողերը

Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների Կազանում կայացած հանդիպումից անցավ մեկ շաբաթ: Սակայն ո՛չ նախագահ Սարգսյանը, ո՛չ էլ նրա ադրբեջանցի գործընկերը որեւէ պաշտոնական հայտարարությամբ հանդես չեկան՝ գոնե ամեն մեկն իր տեսակետից պարզաբանելու, թե ի՞նչ տեղի ունեցավ Կազանում, իսկ ավելի կարեւոր է՝ ինչո՞ւ: Երեւանն ու Բաքուն Կազանից հետո «միմյանց հետ» խոսեցին միայն արտգործնախարարների մակարդակով: Մասնավորապես՝ ՀՀ ԱԳ նախարար **Նալբանդյանը** Կազանի հանդիպումից անմիջապես հետո նշեց, որ բեկում չեղավ, քանի որ առաջարկված եւ փաստորեն արդեն վերջնական ստորագրման համար առաջարկված փաստաթղթին «Ադրբեջանը վերջին տարին ներկայացրեց տասնյակ նոր առաջարկություններ»: Ադրբեջանի ԱԳ նախարար **Մամեդյարովն** իր հերթին «Ինտերֆաքս-Ադրբեջան» գործակալությանը նշեց. «Ցավոք, հայկական կողմը հերթական անգամ չափից դուրս մեծ զիջումներ պահանջեց: Կազանի հանդիպումը ցույց տվեց, որ հայկական կողմը խեղաթյուրում է 7 տարի ձգվող բանակցային առկա գործընթացը»: Մամեդյարովի հաջորդ միտքը շատ ավելի հետաքրքրական է. «Չնայած այս ամենին՝ կողմերը պայմանավորվեցին շարունակել բանակցությունները: Անգամ տպավորություն կա, որ նախագահները պատրաստակամ են բավական ինտենսիվ աշխատելու այս ուղղությամբ»: Մամեդյարովի հայտարարության այս մասը առավել հետաքրքրական է այն առումով, որ սա նման է մի երկրի դիվանագետի հայտարարության, որը չի կարող ասել, թե «ինչո՞ւ չստացվեց» Կազանում, բայց կարող է եւ պետք է երաշխավորի՝ ու հաստատապես շահագրգիռ միջնորդներին, որ իր երկիրը պատրաստակամ է շարունակելու բանակցությունները՝ «միայն որոշ ժամանակ տվեք. ոչ հիմա»: Թե ինչո՞ւ է Բաքվին անհրաժեշտ ժամանակը՝ կարելի է մի շարք պատասխաններ գտնել՝ ինչպես արտաքին քաղաքականության, այնպես էլ Ադրբեջանի ներքին իրողության ոլորտներից: Սակայն մինչ այդ փորձենք հասկանալ՝ ի՞նչ տվեց Կազանը: Ստատուս քվոյի պահպանում եւ միեւնույն ժամանակ կողմերի պատրաստակամության ստանձնում՝ շարունակել խաղաղ բանակցությունները. սա՝ ընդհանուր առմամբ: Իսկ ո՞ւմ են պետք ստատուս քվոյի պահպանումն ու խաղաղ բանակցությունները շարունակելու պատրաստակամության ստանձնումը: Նախ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահները Դովիլում հնչեցրեցին հայտարարություն, ըստ որի ներկայիս իրավիճակը, այսինքն՝ ստատուս քվոն, անվանեցին «անընդունելի»: Հետեւաբար՝ եռանախագահողներին հաստատապես ստատուս քվոյի պահպանումը պետք չէ: Սրա ապացույցները ստացանք նաեւ Կազանի հանդիպումից հետո ԱՄՆ պետքարտուղարության հայտարարությունում, որտեղ, հիշեցնենք, պետքարտուղարության խոսնակ Վիկտորիա Նյուլանդը «հիասթափեցնող» անվանեց Կազանի հանդիպման արդյունքը: Իսկ ռուսական «Կոմերսանտ» թերթի «դիվանագիտական անանուն աղբյուրները» նշեցին, որ նախագահ Մեդվեդեւը նույնպես խոր հիասթափություն է ապրել Կազանի հանդիպման արդյունքից եւ կողմերին ասել, թե «ինքը հաջորդ նման հանդիպմանը կմասնակցի միայն այն ժամանակ, երբ կողմերը վճռականություն ունենան ստորագրելու առաջարկված փաստաթուղթը»: Ու քանի որ Կազանից հետո պաշտոնական Մոսկվան առհասարակ հայտարարությամբ հանդես չեկավ, ստիպված ենք փաստորեն բավարարվել «Կոմերսանտ»-ի «անանուն աղբյուրներով»:

Եռանախագահող մյուս երկրից՝ Ֆրանսիայից, Կազանից հետո նույնպես հնչեց հայտարարություն, որը չի պարունակում արտահայտություններ՝ «Փարիզի հիասթափության» վերաբերյալ, եւ միայն հույս է հայտնում, որ Կազանում կողմերի ստանձնած պարտավորությունը՝ շարունակել խաղաղ բանակցությունները, ի վերջո արդյունքի կբերեն: Այս «համեստ հիասթափության» համայնապատկերում Փարիզի նման ձեւակերպումները անսպասելի չեն: Հիշեցնենք՝ Կազանի հանդիպումից առաջ Մինսկի խմբի ամերիկացի ու ֆրանսիացի համանախագահները՝ Բրայզեն ու Ֆասիեն, ելույթ ունեցան Եվրոպայի խորհրդում, որտեղ բավական ուշագրավ հայտարարություն արեց ֆրանսիացի Ֆասիեն. «Եթե Կազանում կողմերը չհամաձայնեն առաջարկված տարբերակին, ապա միջնորդները կներկայացնեն նոր առաջարկություններ»: Հետեւաբար՝ Փարիզը «հիասթափեցնող» Կազանից հետո պետք է եւ արդարացներ իր պատվիրակի հայտարարությունը եւ հույս հայտներ, որ խաղաղ բանակցությունները, անկախ ամեն ինչից, պետք է շարունակվեն:

Որ Կազանի առկա արդյունքը, այսինքն՝ ստատուս քվոյի պահպանումը պետք չէ նաեւ Հայաստանին ու մանավանդ ԼՂՀ-ին, միանշանակ է: Նախ՝ ոչ ոք չի ուզենա իր բնակչությանը մշտապես պահել հարկադրված պատերազմի վերսկսման վտանգի տակ, իսկ սահմանում պարբերական կրակոցներն ու սադրանքները խլում են մարդկային կյանքեր եւ խիստ լարվածություն են մտցնում: Բացի սրանից՝ ստատուս քվոն կամ ԼՂ հիմնահարցի չլուծված մնալը էներգակիրների տարանցիկ գոտի մեր տարածաշրջանում հայկական երկու կողմերին էլ տնտեսապես մեկուսացնում է: Այսինքն՝ Հայաստանը կոնկրետ, ունենալով չլուծված ԼՂ հիմնահարց, մնում է շրջափակված ու ժամանակ առ ժամանակ ունենում է մարդկային կորուստներ, հետեւաբար՝ Երեւանին ամենեւին էլ ձեռնտու չէ ստատուս քվոյի պահպանումը, նույնը՝ նաեւ Ստեփանակերտին: Այժմ եթե հաշվի ենք առնում, որ ստեղծված իրավիճակում մեկը միշտ մեղավոր է, գոնե ավելի շատ, քան մյուսները, ապա ստացվում է, որ Բաքվին, կոնկրետ Իլհամ Ալիեւին, բավական ձեռնտու է ստատուս քվոյի պահպանումը: Եթե Կազանում կողմերը ստորագրեին առաջարկված փաստաթուղթը, ապա, օրինակ, Մինսկի խմբի համանախագահ Վաշինգտոնը հանգիստ կարող էր «խնդրել» իր դաշնակցին վայելող Թայիփ Էրդողանին վերջապես բացել Հայաստանի սահմանը, քանի որ «ԼՂ հիմնահարցի վերաբերյալ Հայաստանն ու Ադրբեջանը ստորագրել են փաստաթուղթ»: Այսինքն՝ Անկարայի «ներկայությունը» Կազանում, կոնկրետ Իլհամ Ալիեւի համար, ինչպես մեր թերթն արդեն իսկ նշել է, եղել է: Բացի սրանից, կուտակելով արտասահմանյան միլիոններ, մասնակից լինելով տարածաշրջանային մի շարք տնտեսական ծրագրերի՝ առնվազն դրանց նախագծերին, Բաքուն չէր ցանկանա տեսնել այնտեղ նաեւ Երեւանին, իսկ նման մակարդակի համաձայնություն ԼՂ հարցով, ինչը կարող էր լինել Կազանում, Երեւանին տալու էին նման հնարավորություններ: Հետեւաբար, մեկուսացնելով Երեւանին, Իլհամ Ալիեւը նպատակ ունի պահպանել ստատուս քվոն այնքան, մինչեւ իր տնտեսական խոշոր գործընկերները՝ իրենց իսկ ծրագրերն իրականացնելու համար, միակողմանի զիջումներ պարտադրեն Հայաստանին, ինչը Կազանի փաստաթուղթը ամենեւին էլ չէր պահանջում: Այսինքն՝ Կազանից հետո Բաքվից հնչած հայտարարությունները, թե «մենք դեռ տեսնում ենք բանակցությունները շարունակելու հնարավորություն», հենց այս համայնապատկերում են: Բացի սրանից՝ Իլհամ Ալիեւը Կազան մեկնեց «ոչ մի բան չտալու» բարձրաձայնած ցանկությամբ: Euronews-ին տված հարցազրույցում Ադրբեջանի նախագահը նշեց. «Ադրբեջանը չի պատրաստվում տալ ինչ-որ բան նրա դիմաց, ինչը պատկանում է իրեն»: Պետք է նշել, որ Ալիեւի այս բովանդակության հայտարարությունները «խիստ արդարացված են»: Մասնավորապես սկզբում հոր, այնուհետեւ իր ղեկավարության տարիներին Ադրբեջան են մտել հսկայական փողեր, որոնք, սակայն Ադրբեջանում պատկանում են միայն իրեն՝ Ալիեւին: Վերջինս էլ ադրբեջանցի ժողովրդին այդ գումարների մասին «պարզաբանումներ» տալիս է, թե «բանակն ենք զինում, արդիականացնում, ամրացնում, ավելացնում ռազմական ծախսերը» եւ այլն: Այսինքն՝ Ալիեւը ժողովրդին գոնե բարոյապես պատրաստում է պատերազմի, որը ինքը երբեք չի սկսելու: Հետեւաբար, եթե նա Կազանում ստորագրեր ներկայացված փաստաթուղթը, որտեղ հարգվում է ինքնորոշման իրավունքը, պետք է պատասխաներ իր իսկ ժողովրդի հարցերին՝ «Բա էլ ի՞նչ պատերազմ», իսկ ավելի ճիշտ՝ «Ո՞ւր են մեր փողերը»: Ստացվում է, որ մի կողմից Ալիեւին անձամբ ձեռնտու է ստատուս քվոն պահպանել, մյուս կողմից էլ նա պետք է անպայման նշի խաղաղ բանակցությունները շարունակելու իր պատրաստակամության մասին, գոնե արտասահմանյան դրամական հոսքը նախագահական նստավայր չդադարեցնելու համար: Ահա եւ Կազանի «մեղավորը», կամ «մեղավորները»՝ ինչպես կուզեք: Ավելացնենք միայն, որ, անկախ ամեն ինչից, Կազանում նախագահ Մեդվեդեւը թերեւս ինչ-որ «խիստ բան» ասել է: Սրա ապացույցներն էլ բավական տեսանելի են. մասնավորապես Ռուսաստանն այն երկիրը չէ, որ պաշտոնապես անփոփոխ թողնի «Կոմերսանտ»-ի հրապարակումը (առհասարակ՝ մամուլի հրապարակում), եթե ինքը համաձայն չէ դրան: Ինչ վերաբերում է հարցին, թե արդյոք Մեդվեդեւը ճիշտ հասցեատեր է ընտրել «խիստ տոնով» խոսելու համար, ապա այստեղ էլ ապացույցներ կան: Հիշեցնենք՝ Կազանի հանդիպման հաջորդ օրը նախագահ Սարգսյանը Մեդվեդեւի հետ հետեւում էր Կազանում անցկացված ձիասպորտի մրցաշարին, իսկ Իլհամ Ալիեւը արդեն Բաքվում էր: Բացի սրանից՝ Սանկտ Պետերբուրգում եւ Աստրախանում կայացած նույն ձեւաչափով հանդիպումներից հետո, որոնցից առաջինից Ալիեւը «փախուստի դիմեց», ադրբեջանական բանակը դիմեց սադրիչ գործողությունների՝ երկկողմ մարդկային զոհեր: Այս անգամ, չնայած, Ադրբեջանի նախագահն էլի շուտ վերադարձավ հայրենիք, նման սադրանքներ չեղան. եւ դժվար թե Ալիեւն ինքնուրույն հասկացած լիներ, որ սադրիչ գործողությունները ամենեւին էլ կառուցողական քայլ չեն: «Փոխարենը» հունիսի 26-ին Բաքվում մեծ զորահանդեսով նշվեց Ադրբեջանի զինված ուժերի օրը, ի դեպ, հենց այդ օրը ադրբեջանական զորամասերից մեկում զինվորը սպանեց ծառայակից ընկերոջը: Զորահանդեսում, որտեղ բառ անգամ չխոսվեց ադրբեջանական բանակից՝ իրական բանակից, Ալիեւի ելույթը մի հատկանշական տարր ուներ: Խոսելով «հզոր ադրբեջանական բանակի եւ մարտունակ զինվորների մասին», Ադրբեջանի ԶՈւ գերագույն գլխավոր հրամանատարը ընդգծեց. «Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը պետք է ապահովվի. մենք այս ուղղությամբ շարունակելու ենք դիվանագիտական ջանքերը»: Անշուշտ՝ լինի Կազանում, լինի նախքան Կազանը կամ դրանից հետո, Իլհամ Ալիեւին «ինչ-որ մեկը» ինչ-որ բան հասկացրել է, ասենք, պատերազմի վերսկսման ու դրա սպառնալիքների անթույլատրելիության մասին: Կամ միգուցե Իլհամ Ալիեւը, էլի պարտադրված, սկսում է պարզ խոսել իր ժողովրդի հետ, թե «ո՞ւր են իրենց փողերը»:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

**Հ. Գ.- Առաջիկայում սպասվում է Մինսկի խմբի համանախագահների հերթական այցը տարածաշրջան: Ենթադրելի է, որ այցից հետո կամ ընթացքում, համանախագահները հանդես գան աննախադեպ հայտարարությամբ. օրինակ՝ բանակցությունների առկա ձեւաչափը փոխելու եւ այնտեղ Ստեփանակերտին ներառելու վերաբերյալ: Ինչո՞ւ՝ որովհետեւ Կազանում Բաքուն փաստորեն մերժեց առաջարկված տարբերակը: Իսկ ինչո՞ւ այսքան «հայանպաստ», որովհետեւ Բաքուն մինչ այդ մերժել էր նաեւ միջնորդների առաջարկած տարբերակը՝ ԼՂ-ի հետ ստեղծելու ընդհանուր պետություն, ու հենց դրանից հետո միջնորդների բոլոր առաջարկություններում մտավ ու ամրապնդվեց ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի պահպանման պարտադիր սկզբունքը: Այսինքն՝ բանակցությունների տրամաբանությունն է հուշում, որ ժամանակն է կարծես «ընդհանուր պետությունն» ու ինքնորոշման իրավունքը մերժողին ներկայացնել, իսկ գուցե եւ պարտադրել ուղիղ երկխոսություն ինքնորոշված Արցախի իշխանությունների հետ: Չէ՞ որ, ինչպես Կազանի հանդիպման նախորդ օրը Սարգսյան-Օբամա հեռախոսազրույցի մեջ հատուկ ընդգծեց ԱՄՆ նախագահը, «Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդները պետք է ապրեն խաղաղության պայմաններում»: Ինչպես նկատում ենք՝ Օբաման, թեկուզ առայժմ միայն բառապաշարով, «բանակցությունների ձեւաչափը փոխել է»:**

# Հնարավո՞ր է արթնացնել Թուրքիայի մուսուլմանացած հայերին

*Հաշվառվել են 1000-ից ավելի հայկական եկեղեցիներ ու գերեզմանատներ Թուրքիայի միայն 4 շրջաններում*

Գլենդելի Սուրբ Աստվածածին եկեղեցու սրահում Լոս Անջելեսի «Արեւմտյան Հայաստանի պաշտպանության խորհուրդը» (նախագահ՝ Մայքլ Սոսիկյան) հանդիպում էր կազմակերպել Ազիզ Առաքել Դաղչի հետ: Ազիզ Առաքելը սասունցի է, եղեռնին զոհ գնացած գերդաստանի մի մասնիկ:

2006 թ. Պոլսում նրա հիմնած «Սասուն, Բաթման, Մուշ, Վանհայոց մշակույթի զորակցության հիմնադրամը» մեծ ու դժվարին առաքելություն է նախաձեռնել՝ վերադարձնել ու հայկական փոքրամասնության անունով գրանցել այդ շրջաններում հայոց եկեղեցիների եւ գերեզմանատների հողերը: Ընդհանրապես թուրքական սահմանադրությունը նման գործողության իրավասություն տալիս է հայերին, հույներին եւ հրեաներին: Եվ եթե եկեղեցի կառուցվի, այն եւս փոքրամասնության անունով կարելի է գրանցել եւ եկամուտն ուղղորդել պատրիարքարան:

Նշված տարածքներում հիմնադրամն առայժմ հաշվառել է 1000-ից ավելի հայկական եկեղեցիներ ու գերեզմանատներ (միայն 365-ը՝ Սասունում), որոնք սպասում են վերականգնման ու վերագրանցման: Այդ եկեղեցիները գրեթե գոյություն չունեն, բացառությամբ թանգարանի վերածված Սուրբ Խաչ եկեղեցուց: Դաղչը պատմում է, որ 2006 թ. ի վեր, ամեն եկեղեցու համար զատ-զատ, տասնյակ անգամներ բախել են դատարանների դռները, սակայն ապարդյուն:

Ի վերջո, նույն հայցով դիմել են Եվրոպական դատարան, պահանջելով նաեւ 500 հզ. եվրո, որպեսզի հողերի վերադարձից հետո նորոգեն հինը կամ նոր եկեղեցիներ հիմնեն, վերականգնեն ու ծաղկապատեն, պահակներ կարգեն ու պաշտպանեն դրանք: Հիմնադրամն ինքը սուղ միջոցներ ունի, բայց, Գլենդելում գտնվելու ընթացքում, հայահոծ այս համայնքի աջակցությունը ստանալու հնարավորությունն էլ չկա: Թուրքական ներքին օրենքներն արգելում են դրամ առնել հայկական միություններից, պատճառաբանելով, որ այդ դրամը ծախսվելու է իր երկրում, իրենից հողեր հետ առնելու համար:

Այդ տարածքների բնակչության մեծ մասը 1915թ. Եղեռնից հետո կրոնափոխ եղած հայեր են: Դաղչը զարմանալի թիվ է մատնանշում. տարբեր հաշվարկների համաձայն՝ Թուրքիայում 3-5 մլն մուսուլմանացած հայեր կան: Իրենց ամենակարեւոր առաքելությունը նրանց արթնացնելն է: Եթե եկեղեցի լինի այդ շրջաններում, քրդացած ու մուսուլմանացած հայերը գուցե կամաց-կամաց վերադառնան իրենց հավատին, եւ իրենց հոգում էլ ծիլ տա հողի պաշտպանության խորհուրդը: «Մենք մեր ճամփան պիտի շարունակենք, տակավին շատ բան կա անելու», ասում է Դաղչը:

«**Ազգ**»-ի հարցին, թե ինչպես է թուրքական կառավարությունը վերաբերվում իրենց միությանն ու ձեռնարկին, Դաղչը դժվարացավ պատասխանել, պատճառաբանելով, թե իրենց հայցը Եվրոպական դատարանում է, եւ նման հարցադրումները կարող են խոչընդոտել դատաքննության ընթացքին:

Պարզ է միայն մի բան. թուրքերը հակադարձում են, թե 1915 թ. սկսած Սասունը ոչ մի հայ քահանա չի տեսել, եւ եթե եկեղեցիները հայանան կամ նորոգվեն, մուսուլման դարձած հայերն արդյոք կվերադառնա՞ն այնտեղ:

Դաղչը պնդում է, որ Թուրքիայում մոտավոր հաշվարկներով արդեն 20 հազար մուսուլմանացած հայ վերադարձել է իր հավատին:

ԴԻԱՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Ինչու չհանդիպեցին Ստրասբուրգում...

Եվրոպայի խորհրդի քաղաքական դպրոցների ազգային պատվիրակությունների մասնակիցների համար կազմակերպված այս տարվա ամառային համալսարանի հիմնական թեման, որ հունիսի 27-29 քննարկվեց Ստրասբուրգում, էթիկան էր՝ քաղաքականության հոլովույթում: Թե որքանով են այդ երկու հասկացությունները փոխազդում կամ առնչվում իրականության մեջ, մեզանից յուրաքանչյուրն առիթ է ունենում տեսնելու, լսելու, անգամ երբեմն շոշափելու:




*Լորանի հետ ՔԴԵԴ մասնակիցները փորձում են ճշտել ղարաբաղցի մասնակցի հետ պատահածը:*

Եվրոպայի խորհուրդն էլ, մարդու իրավունքների ու լավ կառավարման հարցերը կարեւորած ներկայացնելով հանդերձ, էթիկական հարցերի առնչությամբ բավականին հետ է նույն մարդու իրավունքների առումով տարբերակված մոտեցումների կիրառման պրակտիկայից: Եվ եթե տրամաբանություն փնտրենք ամառային համալսարանի ընթացքում տեղի ունեցած վերջին իրադարձությունների մեջ, ապա պետք է արձանագրել, որ 47 երկիր միավորող այդ կառույցում մարդն ու նրա իրավունքները համադրելի իրողություններ չեն:

Քաղաքական դասընթացների երեւանյան դպրոցը (ՔԴԵԴ), որ գործում է արդեն վեց տարի, այս տարվա իր սեմինարներին որպես մասնակից էր ներառել նաեւ Արտակ Ներսիսյանին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից: Վերջինս մի շարք սեմինարների մասնակցության արդյունքներով հրավիրվել էր նաեւ մասնակցելու ստրասբուրգյան միջոցառմանը, գնվել էր տոմս, ստացվել էր Արտակ Ներսիսյանի՝ Ֆրանսիայում հայտնվելու անցագիրը:

Բայց Եվրոպայի խորհրդում կողմ են ժողովրդավարությանը, քանի դեռ մեկը, որ ավելի հաճախ էներգակիրներ տնօրինող երկիր է, «կարծիք» չի հայտնում եվրոպացի դիտարկվողների աշխարհագրության կամ ուղղակիորեն իր նախընտրությունների առնչությամբ: Այդպիսի մի դրսեւորմամբ էլ, Ադրբեջանի մանր-մունր կառույցների հանած աղմուկի հետեւանքով Ստրասբուրգում թռիչքից մեկ օր առաջ Եվրոպայի խորհրդից տեղեկացրին, թե Արտակ Ներսիսյանը չի կարող մասնակցել ամառային համալսարանին:

Ինչո՞ւ: Շատ բնական մի հարց, որ հաստատապես պիտի արձագանքվեր, թե Ադրբեջանն իր խողովակներով բողոքել է նրա մասնակցության դեմ: Սա դեռ կարելի է սովորական երեւույթների շարքը դասել, բայց երբ սովորական պետք է ընկալվի նաեւ, որ Եվրոպայի խորհուրդն էլ Ադրբեջանի թելադրանքով է ժողովրդավարություն ու դրա նման արժեքներ կիրառում, արդեն լուրջ խնդիր է:

«Ես չեմ ցանկանում մեկնաբանել այդ հարցը ձայնագրիչի միացված լինելու պարագայում», վերը նշված իրականության փոխարեն այսպես նախընտրեց պատասխանել Եվրոպայի խորհրդի քաղաքական տնօրենության գլխավոր տնօրեն **Ժան-Լուի Լորանը**՝ Արտակ Ներսիսյանի մասնակցությունը վերջին պահին հանելու առնչությամբ «**Ազգի**» հարցին: Ու քանի դեռ ձայնագրիչը միացված էր, Լորանը շարունակում էր պնդել, թե ամեն ինչ բացատրվել է երեւանյան դպրոցի տնօրենությանը, ու ավելացնելու ոչինչ չկա:

«Ես գիտեմ, որ խումբը հիասթափված է, բայց սխալն արվել էր մինչ այդ», որպես սխալ նկատի ունենալով քաղաքական դասընթացների երեւանյան դպրոցի հայաստանյան սեմինարներին ԼՂՀ-ից մասնակից ունենալու հանգամանքը՝ ասաց Եվրոպայի խորհրդի քաղաքական տնօրենության գլխավոր տնօրենը: «Սխալն արվել է, մինչդեռ երեւանյան տնօրենությունը գիտեր խաղի կանոնները», հայտարարեց Լորանը:

Արդեն առանց ձայնագրության, բայց երեւանյան դպրոցի մի խումբ մասնակիցների հետ զրույցում Լորանը փորձում էր հավաստիացնել, որ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչին ամառային համալսարանին չմասնակցելու որոշումը կայացվել է ոչ թե ադրբեջանական կողմի ճնշմամբ, այլ անմիջապես իր մոտեցմամբ, երբ նկատել է, որ Արտակ Ներսիսյանը Ղարաբաղից է: Իսկ թե ինչու է Եվրոպայի խորհուրդը վերջին պահին դա նկատել, մնում է հարցնել ադրբեջանական կառույցներին, որոնք թերեւս դա էլ «հուշել» են:

Ամեն դեպքում, քաղաքական դասընթացների երեւանյան դպրոցի մասնակիցները Ստրասբուրգում պետք է հանդիպեին Բաքվի դպրոցի հետ, սակայն հանդիպումը տեղի չունեցավ, քանի որ երեւանյան դպրոցի անդամների մեծամասնությունը որոշեց այդկերպ հայտնել իր բողոքը: Այս առնչությամբ էլ Լորանն իր գնահատականն ուներ, թե ճիշտ չէր չհանդիպելը, մինչդեռ բողոքի ակցիան համերաշխության արտահայտություն էր մեկ տարվա ընթացքում անցկացված տարբեր միջոցառումներին մասնակցած ղարաբաղցի գործընկերոջ առումով:

Իսկ Բաքվի դպրոցի հետ հանդիպումները, ինչպես եւ այլ շատ ձեւաչափերում, որեւէ արդյունք չեն գրանցում: Դրա համար էլ, անգամ եվրոչինովնիկի համար, պետք է հստակ լինի, որ հայ-ադրբեջանական այդօրինակ հանդիպումները, հատկապես առանց խնդրո առարկա Ղարաբաղի ներկայացուցիչների, նախապես զրո արդյունքի հեռանկար ունեն, որ միշտ ապացուցվում է: Դրա փոխարեն երեւանյան դպրոցի օրակարգ մտցված Մինսկի դպրոցի մասնակիցների հետ հանդիպումը շատ ավելի հետաքրքրական էր ոչ միայն հայ, այլեւ բելառուս մասնակիցների համար:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՔԴԵԴ մասնակից
Ստրասբուրգ

ՍԱՆԱՍ

# Եմենը կորցրել է 20 նահանգներից 5-ի վերահսկողությունը

**Եմենի փոխնախագահ Աբդուրաբա Մանսուր Հադին, որը ներկայումս պետության ժամանակավոր ղեկավարն է, խոստովանել է, որ իշխանությունները կորցրել են 20 նահանգներից 5-ի վերահսկողությունը:**

**CNN հեռուստաալիքը հաղորդում է Եմենի զինված ուժերի եւ «Ալ Ղաիդայի» զորհայինների կատաղի մարտերի մասին: Միեւնույն ժամանակ երկրում շարունակվում են ցեղային միությունների անդամների ելույթները նախագահ Ալի Աբդուլլահ Սալեհի վարչակարգի դեմ: Հունվարի վերջերին սկսված բողոքի բազմամարդ ցույցերի մասնակիցները պահանջում են 33 տարի կառավարող Սալեհի հրաժարականը:**

**Հունիսին հրետակոծության հետեւանքով Սալեհը վիրավորվեց եւ մինչեւ օրս բուժվում է Սաուդյան Արաբիայում: Ստույգ տեղեկություններ չկան, թե ինչպիսին է Սալեհի առողջական վիճակը եւ նա վերադառնալո՞ւ է արդյոք հայրենիք:**

**Հադին հերքել է այն լուրերը, թե Սալեհի բացակայության պայմաններում ինքը կարող է իշխանափոխություն իրականացնել: Փոխնախագահը լրագրողներին մասնավորապես հավաստիացրել է, որ ինքը Սալեհի պաշտոնաթողությանը հավանություն կտա երկրում նախագահական ընտրությունների անցկացման դեպքում:**

Պ.Ք.

# Սաուդցի իշխան. «Եթե Իրանը միջուկային զենք ունենա, մենք էլ նույնը կանենք»

**Եթե Իրանի Իսլամական Հանրապետությունը միջուկային զենք ունենա, ապա Սաուդյան Արաբիան եւս նման զենք ձեռք բերելու միջոցներ կփնտրի: Այդ մասին Մեծ Բրիտանիայում՝ օդուժի «Մոուլսվորտ» ռազմակայանում հայտարարել է սաուդյան թագավորական ընտանիքի անդամ, իշխան Տուրկի ալ Ֆայսալը, որն անցյալում եղել է դեսպան ԱՄՆ-ում եւ Մեծ Բրիտանիայում, ինչպես նաեւ հետախուզության պետ:**

**Իշխանը ներկաներին պատմել է սաուդցիների առաջիկա տասը տարվա ազգային դոկտրինայի մասին: Բրիտանական լրատվամիջոցները հաղորդում են, որ սաուդցի իշխանը ելույթ է ունեցել դռնփակ պայմաններում, բայց որոշ տեղեկություններ այնուամենայնիվ հայտնի են դարձել: Ավելի վաղ նա առաջարկել էր ճնշում գործադրել Իրանի նավթային հատվածի վրա:**



**«Գարդիան» թերթի տեղեկությունների համաձայն, Տուրկի ալ Ֆայսալը հայտարարել է, թե Իրանում միջուկային ռումբի ստեղծումը կհանգեցնի «անչափ դրամատիկ հետեւանքների»: Իր ելույթում նա ասել է, որ Էր Ռիադը երկյուղներ ունի Մերձավոր Արեւելքի ապագայի հարցում, եւ մտահոգություն է արտահայտել տարածաշրջանում Իրանի ազդեցության աճի հետեւանքով արաբական մի շարք երկրների հավանական ապակայունացման կապակցությամբ: Սաուդյան գահատոհմը դա անմիջական սպառնալիք է համարում իր իշխանության համար, քանի որ Սաուդյան Արաբիայի բնակչության 15 տոկոսը կազմող շիաներն ապրում են նավթառատ Արեւելյան նահանգում: Էր Ռիադում վախենում են, որ շիա հպատակները Իրանի հրահրմամբ կարող են խռովություն բարձրացնել:**

**Իրանցիների հարաճուն ազդեցության դեմ պայքարելու նպատակով Սաուդյան Արաբիան առաջին հերթին օգտագործում է իր վիթխարի դրամական միջոցները: Տուրկի ալ Ֆայսալի խոսքերով, միլիարդավոր դոլարներ են ծախսվում Լիբանանում, Պաղեստինյան ինքնավարությունում եւ Եգիպտոսում Իրանի ազդեցությունը հակակշռելու նպատակով:**

**Արեւմուտքի մամուլում մի քանի տարի առաջ հայտնվել էին հաղորդումներ, որ Սաուդյան Արաբիան Պակիստանի հետ բանակցում է միջուկային զենքի ձեռքբերման շուրջը: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հիշեցնում է մասնավորապես այն հաղորդումները, թե Իսլամաբադը եւ Էր Ռիադը իբր կնքել են գաղտնի համաձայնագիր, ըստ որի Պակիստանը պարտավորվել է Սաուդյան Արաբիային միջուկային զենք տրամադրել Մերձավոր Արեւելքում ճգնաժամի վտանգի ծագման դեպքում:**

# Քոչարյան-Ալիխանյան-Բոնները

**Այն տպավորությունն է ստեղծվում, որ Հայաստանում գրեթե անտեսվեց «հասարակական գործիչ, իրավապաշտպան, հրապարակախոս, այլախոհ Ելենա Բոնների մահվան լուրը: Զարմանալի է, որովհետեւ հայոց երկրում սիրում են մեծարել հայկական ծագման մարդկանց, հաճախ նույնիսկ հաշվի չառնելով նրանց որեւէ ծառայությունն ազգին:**

**Առավել եւս զարմանալի էր, որ Բոններին նվիրված ռուսաստանյան բազմաթիվ հրապարակումներում զգալի տեղ էր հատկացվում նաեւ նրա ազգային ծագմանը: Ընդ որում, լիբերալ մամուլը եւ նացիոնալիստական մամուլը բոլորովին տարբեր կերպ էին մոտենում այդ հարցին, անգամ դրա փաստացի կողմերին: Ըստ առաջինների, Բոնները ծնվել է Թուրքմենիայի Տերվ քաղաքում, հայրը եղել է Լեւոն Սարգսի Քոչարովը (Քոչարյան), խորթ հայրը՝ Գեւորգ Սարգսի Ալիխանյանը: Մայրը հրեա է՝ Ռուֆ Գրիգորիեւնա Բոններ: Իսկ ըստ ռուս նացիոնալիստ լրագրողների, Ելենան ծնվել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքից ոչ հեռու գտնվող Շուշի բնակավայրում, հոր ազգանունն է Ալիխանյան, բայց երբ նա մահացել է, աղջնակին դաստիարակության է առել հրեա հարեւանը՝ Բոններ ազգանունով:**

**Այս «կենսագիրները» հատուկ ընդգծում են, որ փոքրիկ Ելենան, որը հայ էր, Շուշիում ապրել է ադրբեջանցիների հետ թշնամական մթնոլորտում եւ իբր հենց այդ պարագան է դեր խաղացել հետագայում նրա հայամետ դիրքորոշումներում, իբր «նրա մանկական ապրումները ամենաողբերգական ձեւով են անդրադարձել ԽՍՀՄ-ի փլուզման շրջանում, երբ Ղարաբաղը դարձավ տերության քայքայման մեկնակետը»:**

**Ինչո՞ւ են երկու կողմն էլ սրում նրա ազգային պատկանելության հանգամանքը: Լիբերալների (հիմնականում՝ հրեաների) համար Ելենա Բոնները տոտալիտարիզմի դեմ պայքարի «բոցաշունչ» մարտիկ է (հրեա՝ մոր կողմով): Իսկ չէ՞ որ «հինգերորդ շարասյունը» էական դեր խաղաց գերտերության կործանման, «դեմոկրատիայի եւ ազատության» հաստատման անմռունչ պայքարում: Եվ հրեա Բոնները դրա կարկառուն ներկայացուցիչն է:**



**Իսկ ահա ռուս նացիոնալիստները ԽՍՀՄ-ի փլուզումը դիտում են որպես դարի մեծագույն աղետը եւ ատելությամբ են վերաբերվում այդ գործընթացում ոչ ռուս անձանց «նենգ ու դավադիր» դերակատարությանը: Եվ Բոնները իր «արեւելյան հայ-հրեական հսկայական էներգետիկայով» չէր կարող համակրանքի առարկա լինել ազգասեր ռուսների համար:**

**Այդուհանդերձ, հա՞յ էր էությամբ Ելենա Բոնները: Հազիվ թե: Նրա համար թերեւս առաջնայինը մայրական արյունն էր, եւ ապրում էր նա հրեական միջավայրում: Սովորաբար նրա «հայամետ» ազդեցության արդյունք են համարում ամուսնու՝ ակադեմիկոս Անդրեյ Սախարովի հայապաշտպան գործունեությունը: Սակայն Բոններն ու նրա նմանները հայության նկատմամբ «անհուն» սիրուց դրդված չէին պաշտպանում ղարաբաղյան շարժումը (խոսքը չի վերաբերում Սախարովին): Հայերը գործիք ու խթան էին հոգուս Արեւմուտքի ու առաջին հերթին ԱՄՆ-ի մրցակից գերտերությունը վերացնելու ապարեզում:**

**Երջանի՞կ էր Բոնները անկախ Հայաստանի, Ղարաբաղի համար: Համենայն դեպս, իր կյանքի վերջին տարիներին ապրելով Ամերիկայում, նա գերազանցապես զբաղված էր ներկայիս «անազատ» Ռուսաստանի նշավակումներով եւ, իմիջիայլոց, ողբում էր, որ Պուտինը ջարդեց չեչեններին եւ չթողեց, որ Հյուսիսային Կովկասը ազատագրվի «կայսերապետական օկուպացման լծից»: Հայերս կասեինք՝ էլ ցավուդարդ չուներ նախկին շուշեցին՝ Քոչարյան-Ալիխանյան-Բոնները:**

**Ասում են մեռածի հասցեին պետք չէ վատ խոսել: Լավ, լսենք ռուսների մի մասի կարծիքը. «Ելենա Բոնները ԽՍՀՄ-ի փլուզման դարաշրջանի ամենաչարանենգ դեմքերից մեկն է, Անդրոպովի դիվական մտահղացման մասնակիցը, գորբաչովյան վերակառուցման դեւը: Հիմա նրանք մեռնում են, մեկը մյուսի հետեւից հեռանալով ասպարեզից՝ պարտիան ժամանակին շահելուց հետո: Մնացել է միայն... Գորբաչովը»:**

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

ԳՆԱՀԱՏԱՆՔ

# «Հովեր» երգչախումբը փայլեց իտալական փառատոնին

«Հովեր» պետական կամերային երգչախումբը, գեղարվեստական ղեկավար Սոնա Հովհաննիսյանի գլխավորությամբ եւ Հայաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ, օրերս է վերադարձել Իտալիայից: Անցած տարի երգչախումբը հրավեր էր ստացել մասնակցելու աշխարհի պրոֆեսիոնալ երգչախմբերի ամենահռչակավոր փառատոներից մեկին՝ Ֆրանսիայում անցկացվող «Պոլիֆոնիա» փառատոնին: Հենց այդ փառատոնում «Հովեր» երգչախմբի ելույթը բարձր է գնահատվել եւ արդյունքում ստացել է Միլանի Լոմբարդիա գավառում անցկացվող «Լա ֆաբրիկա դել Կանտո» փառատոնին մասնակցության հրավեր:



Երեկ, նախարարությունում, Սոնա Հովհաննիսյանը հանդիպեց լրագրողների հետ ու հետաքրքրական դեպքեր պատմեց փառատոնից: Հունիսի 11-19-ը «Հովեր» երգչախումբը փառատոնային համերգաշարով 8 օրում տվել է 7 համերգ Օլջիատե Օլոնայում, Բեզանա ին Բրանցայում, Բարդելյանոյում, Լիսսոնեում, Լեգնանոյում: Երգչախումբը ունենալով ակնհայտ հաջողություններ ու մեծ համարում երգչախմբային արվեստի միջազգային դաշտում, գտնում է, որ աշխարհի լավագույն երգչախմբերի շարքին դասվելն այլ խնդիր է, քան վստահության դաշտում կայանալն ու զարգանալը, այն համարելով չափազանց պատասխանատու եւ բարդ աշխատանք: Այդ է պատճառը, որ երգչախումբը չբավարարվելով ներկայիս իր ձեռքբերումներով, մշտապես ձեռնամուխ է նորանոր աշխատանքների: «Հովերը» փառատոնային համերգներին հնչեցրել է Կոմիտասի երաժշտությունը եւ ժամանակակից հայ կոմպոզիտորների գործեր:

Հունիսի 11-ին եւ 12-ին Միլանում կայացած համերգներին «Հովեր»-ը վեց այլ երգչախմբերի հետ միասին կատարել է ճապոնացի կոմպոզիտոր Կո Մացուշիտայի՝ Ճապոնիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի եւ ցունամիի զոհերի հիշատակին գրված ստեղծագործությունը, որը ղեկավարել է իտալացի հանրահայտ դիրիժոր Պաոլո Ալլը: Ինչպես նշում էր Սոնա Հովհաննիսյանը, իրենց ելույթները մեծ հետաքրքրություն են առաջացրել եւ արդյունքում մոտ 500 օրինակ ձայնագրություն է վաճառվել՝ կոմիտասյան շարքից: Գեղ. ղեկավարը շատ գոհ է երգչախմբից եւ «**Ազգ**»-ի հարցին պատասխանելով ասաց, որ երգչախումբը մշտապես նոր երգիչներ է ընդգրկում իր կազմում, որոնք անմիջապես մտնում են երգչախմբի ներքին աշխարհ, մասնակից լինում մասնագիտական ներքին վեճերին ու ստեղծագործությունների ընտրությանը եւ այլն:

«Հովեր» երգչախումբը սեպտեմբերին դիրիժոր Զավեն Վարդանյանի հետ հանդես կգա նոր համերգային ծրագրով, որից հետո կսկսի զբաղվել 2012-ին «Հովերի» հիմնադրման 20-ամյակի հոբելյանական համերգներին:

Փառատոնից «Հովերը» կրկին վերադարձել է հաղթանակած՝ հաջորդ տարի պրոֆեսիոնալ երգչախմբերի փառատոնին մասնակցելու հրավերով: Բացի այդ, արդեն ստացել են հրավերներ Հոլանդիայից, Չինաստանից, Իտալիայից ու Հունգարիայից:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Բեռլինալեի հաղթողը «Ոսկե ծիրանի» մրցույթում

Բեռլինի կինոփառատոնի «Ոսկե արջ» մրցանակին արժանացած իրանցի ռեժիսոր Ասղար Ֆարհադիի «Նադեր եվ Սիմին, ամուսնալուծություն» ֆիլմը «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի գլխավոր մրցույթում է: Սա ռեժիսորի առաջին մրցանակը չէ Բեռլինում. դեռ 2009 թվականին իր առաջին «Էլլիի մասին» ֆիլմի համար Ասղար Ֆարհադին արժանացել էր «Արծաթե արջ»-ի: «Նադեր եւ Սիմին, ամուսնալուծություն»-ը առաջին իրանական ֆիլմն է, որ արժանանում է Բեռլինալեի Գրան պրիին: Իսկ Նադերի եւ Սիմինի դերակատարները ստացան տղամարդու եւ կանացի լավագույն դերակատարման համար նախատեսված «Արծաթե արջեր»-ը:

«Նադեր եվ Սիմին, ամուսնալուծություն» ֆիլմն ամուսնական զույգի ու նրանց խնդիրների մասին է: Սիմինը ցանկանում է հեռանալ Իրանից, սակայն ամուսինը ստիպված է հոր հիվանդության պատճառով մնալ: Կինը նախընտրում է ամուսնալուծվել եւ դստեր հետ հեռանալ: Իսկ հետագա դեպքերի զարգացումը անակնկալի է բերում ընտանիքի բոլոր անդամներին եւ հանդիսատեսին:

«Ոսկե ծիրանի» 8-րդ երեւանյան միջազգային կինոփառատոնը կանցկացվի հուլիսի 10-17-ը՝ շնորհիվ փառատոնի հավատարիմ գործընկերների՝ ի դեմս ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության՝ որպես գլխավոր հովանավոր, եւ ՀՀ մշակույթի նախարարության՝ որպես պետական աջակից:

*«Ոսկե ծիրանի» մամլո կենտրոն*

# «Ոսկե ծիրանի» եւ դեսպանությունների ու միջազգային կազմակերպությունների համագործակցությունը շարունակվում է

Այսօր տեղի կունենա «Ոսկե ծիրան» կինոփառատոնի եւ Հայաստանի Հանրապետությունում ներկայացված դեսպանատների ու միջազգային կառույցների համագործակցությանը նվիրված մամուլի ասուլիսը: Բանախոսներն են «Ոսկե ծիրան»-ի գեղարվեստական տնօրեն Սուսաննա Հարությունյանը, ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության փոխդեսպան Քրիստոֆ Բրոյնիգը եւ մշակութային կցորդ Սոֆի Բյոմը, Ֆրանսիայի դեսպանության մշակույթի եւ համագործակցության հարցերով խորհրդական Ժան-Պոլ Մարտենը, Լեհաստանի Հանրապետության փոխդեսպան Մաչեյ Ֆալկովսկին, Իտալիայի Հանրապետության դեսպանության մշակութային կցորդ Լաուրա Պաչենտին, Բրազիլիայի Դաշնային Հանրապետության դեսպանության մշակութային կցորդ Ֆլորիանո Ռեգիսը, Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի տնօրեն Արեւիկ Սարիբեկյանը եւ Եվրոպական համագործակցության հիմնադրամի տնօրեն Գեւորգ Տեր-Գաբրիելյանը:

*«Ոսկե ծիրան» կինոփառատոնի լրատվական կենտրոն*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

# *Գրական հուշարձան հայ կաթողիկե նորոգ հանգուցյալ Հոգեւոր տիրոջ*

2011 թ. հունվարի 16-ին Լիբանանում վախճանվեց հայ կաթողիկե համայնքի 18-րդ կաթողիկոս-պատրիարքը՝ Հովհաննես-Պետրոս ԺԸ Գասպարյանը: Նրա մարմինը հունվարի 21-ին ամփոփվեց Զմմառի վանքի պատրիարքական դամբարանում:

Հոգեւոր տերը (հայ կաթոլիկներն այսպես են կոչում իրենց պատրիարքներին-Ծ. Խ.) ծնվել էր 1927 թ. հունվարի 20-ին՝ Կահիրեում, քահանա ձեռնադրվել 1952 թ. ապրիլի 13-ին, եպիսկոպոս՝ 1973 թ. փետրվարի 25-ին եւ վարել Բաղդադի հայ կաթողիկե թեմի առաջնորդության պաշտոնը: Հայ կաթողիկե սյունհոդոսական հայրերը նրան կաթողիկոս-պատրիարք էին ընտրել 1982 թ. օգոստոսի 5-ին՝ իբրեւ հաջորդը 1976-1982 թթ. գահակալած Հմայակ-Պետրոս ԺԷ Կետիկյանի: Գասպարյանը գահ էր բարձրացել 1982 թ. սեպտեմբերի 12-ին՝ Զմմառում, մինչ Իսրայելի զորքերը գրավել էին Լիբանանի համարյա կեսը, նվազ քան մեկ ամիս առաջ սպանվել էր երկրի նախագահ ընտրված Բեշիր Ջեմայելը, ում հաջորդել էր ավագ եղբայրը՝ Ամինը:




Գասպարյանին վիճակվեց պաշտոնավարել Լիբանանի եւ աշխարհի պատմության շատ բարդ մի ժամանակաշրջանում. Լիբանանում մոլեգնում էին իսրայելական գրավումն ու դրա դեմ դիմադրությունը, քաղաքացիական պատերազմը, իսկ 1980-ականների վերջին փլուզվեց սոցիալիստական համակարգը: Հայկական կյանքն էլ ապրեց դարակազմիկ իրադարձություններ՝ Արցախյան շարժում եւ ազատամարտ, Խորհրդային Հայաստանի հյուսիսի 1988 թ. դեկտեմբերի 7-ի աղետ, անկախություն եւ հաջորդած ծանրագույն ժամանակաշրջան, Արեւելյան Եվրոպայի եւ նախկին ԽՍՀՄ-ի երկրներում հայ կաթողիկե համայնքների վերակենդանացում... Այս բոլոր վարիվերումների ընթացքում Հովհաննես-Պետրոս ԺԸ Գասպարյանը, հաճախ լուսարձակներից հեռու, առաջնորդեց իրեն վստահված հոտը իմաստությամբ, ինչպես նաեւ իր խաղաղարար դերն ունեցավ լիբանանյան հակամարտող կողմերի եւ այլ կնճիռների հարթեցման մեջ: Բոլորի համար անսպասելի էր նրա անակնկալ հրաժարումը զբաղեցրած բարձրագույն պաշտոնից, որը Հովհաննես-Պողոս Բ պապն ընդունեց 1999 թ. հունիսի 23-ին: Գասպարյանին հաջորդեց ներկայիս կաթողիկոս-պատրիարքը՝ Ներսես-Պետրոս ԺԹ Թարմունին: Հրաժարականից հետո Հովհաննես-Պետրոս ԺԸ-ն քաշվեց Զմմառի վանքը՝ ժամանակի մեծ մասն անցկացնելով խոկումներով եւ աղոթասացությամբ, «մեկուսացաւ մեծոգի անձնաւորութեանց յատուկ խոնարհութեամբ», ինչպես գրում է Գեւորգ ծ. վրդ. Զապարյանն իր «Անկործան բուրգի նման...» ոգեկոչական գրության մեջ (էջ 30):

Հանգուցյալ Հոգեւոր տիրոջ վախճանումից ընդամենը մի քանի շաբաթ անց՝ 2011 թ. փետրվարի նշումով, սակայն մարտ ամսին լույս տեսավ նրա անունը կրող հուշամատյան-ալբոմը: 17 x 17 (սմ.) չափսի 166 էջ ծավալով (113 էջը՝ հայերեն, ֆրանսերեն եւ իտալերեն, 53-ը՝ արաբերեն) գրքի հրատարակչական տվյալներն են. «Հրատարակութիւն Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան «Աւետիք» պաշտօնաթերթին, համագործակցութեամբ Զմմառու Պատրիարքական Միաբանութեան Վարչութեան, Պէյրութ, 2011»: Լույս է տեսել իբրեւ «Աւետիքի» 4-րդ հավելվածը: Թեեւ չի նշվել կազմողի անունը, սակայն մեր ունեցած հավաստի տեղեկություններով՝ հուշամատյանը կազմել է լիբանանահայ վաստակաշատ լրագրող եւ խմբագիր Սարգիս Նաճարյանը:

Ինչպես արդեն նշեցինք, հատորի նյութերը քառալեզու են, որոնք նույնական չեն: Մասյանում ամփոփված են հանգուցյալի մահվան առթիվ Ներսես-Պետրոս ԺԹ-ի ստացած ցավակցագրեր ՀՀ նախագահից, արտգործնախարարից եւ Հռոմում դեսպանից, Վատիկանի պատասխանատուներից, Մայր աթոռ Ս. Էջմիածնից, Կ. Պոլսո հայոց պատրիարքարանից, Լիբանանի Հանրապետության նախկին նախագահ Ամին Ջեմայելից եւ գործող ու նշանակյալ վարչապետներ Նեջիբ Միքաթիից ու Սաադ Հարիրիից, քույր եկեղեցիների պետերից (բոլորը՝ բնագրերի լուսապատճենումով), սփյուռքահայության քաջածանոթ դր Ռոմեն Կոզմոյանից (Երեւան), հուշեր եւ վկայություններ Զմմառի միաբան հայրերից, հայ կաթողիկե աշխարհականներից, հանգուցյալի հարազատներից եւ ուրիշներից: Դրանց շնորհիվ մեր առջեւ կրկին կերպարանավորվում է համեստության եւ բարության տիպար եկեղեցականը, իր հոտի նվիրյալ ու արթուն պահակը: Գեւորգ վրդ. Ասատուրյանը վկայում է, որ Հովհաննես-Պետրոս ԺԸ-ն այցելում էր հիվանդանոցներ՝ «յաճախ իբրեւ անծանօթ քահանայ մը պարզապէս վերջին օծումը տալու եւ զինք հասցնելու դէպի ապահով կայանը երկնքի» (էջ 46-47): Հրաժարականի պատճառ(ներ)ի մասին չկան հստակություններ, կան հեռավոր ակնարկներ միայն: Այսպես, Գեւորգ ծ. վրդ. Եղիայանը, դիմելով հանգուցյալին, գրում է. «... նոյնիսկ հրաժարեցար պատրիարքական աթոռէն, գահէն, պատիւներէն, հրապոյրներէն, փառքերէն ու մեծաշնորհներէն՝ երբ փարիսեցիներ, դպիրներ ու կեղծաւորներ ուզեցին քեզ հեռացնել քու սիրելի ժողովուրդէդ...» (էջ 23): Հանգուցյալի մտերիմներից Հրաչ Կ. Շահբազյանն էլ գրում է, որ սիրով ու համեստությամբ հասկացվող պատրիարքը, «ճիշդ ատոր համար ալ, դժբախտաբար, նենգ ու տրտմոտ արարքներու զոհը դարձաւ, Քրիստոսի նման կրելով պարտադրուած խաչը եւ յաճախ ալ միւս այտը դարձնելով զինք ապտակողին» (էջ 66): Ինքը՝ Հովհաննես-Պետրոս ԺԸ-ն 1999 թ. հոկտեմբերի 3-ին արտասանած իր հրաժեշտի խոսքում շատ ավելի զուսպ է ու բավարարվում է ասելով. «Պաշտօնապէս կուզեմ յայտարարել, թէ իմ որոշումիս միակ դրդապատճառը Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ գերագոյն բարիքն է» (էջ 80):

Հայկական շրջանակներից ստացված պաշտոնական ցավակցագրերը ուշագրավ են մի քանի առումներով.

ա. Մինչ բոլորը, այդ թվում՝ ՀՀ նախագահը եւ ի հոգեւորս Մայր աթոռին ենթակա Կ. Պոլսո պատրիարքության ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշյանը հանգուցյալի ու նրա հաջորդի համար գործածում են ընդունված տիտղոսն ու դիմելաձեւը (Տանն Կիլիկիո կաթողիկոս-պատրիարք, ամենապատիւ եւ գերերջանիկ տեր հայր), Մայր աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Հովակիմ եպս. Մանուկյանը բավարարվում է «պատրիարք» ու «ամենապատիւ» բնութագրիչներով: Իրենց զգացնել են տալիս ջերմության պակասն ու պաշտոնական, պրոտոկոլային տոնայնությունը (էջ 10): Բայց չէ՞ որ երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը եղբայրական գորովով էր հյուրընկալել 1988 թ. դեկտեմբերի 28-ից 1989 թ. հունվարի 3-ը Հայրենիք՝ աղետյալներին եւ նույնինքն Հայոց հայրապետին սփոփելու եկած հայ կաթողիկե Հոգեւոր տիրոջը, մինչեւ իսկ հրահանգելով հիշատակել նաեւ վերջինիս անունը Մայր տաճարում՝ 1989-ի ամանորի պատարագի ընթացքին (այս մասին տեսնել Հոգեւոր տիրոջը Հայրենիք ուղեկցած Սարգիս Նաճարյանի հուզիչ հուշագրությունը, էջ 33-42): Մեր համոզումով՝ առհասարակ մարդոց, առավել եւս՝ կղերականների վեհությունը հենց սիրո ու համեստության մեջ է...

բ. Տարօրինակ է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունից ցավակցագրի բացակայությունը, մանավանդ եթե նկատի ունենանք այն փաստը, որ Անթիլիասը Զմմառից ու Հայ կաթողիկե պատրիարքարանից ընդամենը մի քանի կիլոմետր հեռու է միայն (թեեւ ժամանակակից հաղորդակցական միջոցները լուծել են անմիջական կապի հարցերը նույնիսկ տիեզերքի հետ): Ավելորդ չէ կրկնելը, թե վեհությունը հենց սիրո ու համեստության մեջ է...

գ. Ուղղակի շշմել կարելի է, թե ՀՀ պետական այրերի գրություններում տեղ են գտել լեզվական սխալներ: Այսպես, Հռոմում արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Կարապետյանի ցավակցագրում «Կիլիկիո» բառը երկու անգամ տպվել է «Կիլիկյո» սխալ տեսքով (էջ 32): Արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի ցավակցագրում «ԺԸ»-ի կողքին բացակայում է սեռական հոլովի «ի» ածանցը (էջ 11), իսկ ՀՀ նախագահի պաշտոնագրում (էջ 9) «պատրիարք» բառը Ներսես-Պետրոս ԺԹ-ի տիտղոսում տպվել է «պատրիրարք» տեսքով: Ավելին, պետության առաջին դեմքի փաստաթղթի տարեթիվ է տպվել 2010 թվականը, փոխարեն 2011-ի... Մի՞թե կարելի է նման սխալներ թույլ տալ (ՀՀ նախագահի անձնակազմին առաջարկում ենք անհապաղ ուղղել այս սխալը, որպեսզի փաստաթուղթը հետագայում Հայաստանի Ազգային արխիվում հանգրվանելով՝ հետագա սխալների պատճառ չդառնա): Տարակուսանք է հարուցում նաեւ ՀՀ նախագահի ստորագրության ճշտությունը:

Հուշամատյանը շատ հարուստ է Հովհաննես-Պետրոս ԺԸ-ի կյանքի տարբեր հանգրվաններն արտացոլող սեւ-սպիտակ եւ գունավոր լուսանկարներով: Լավ կլիներ, որ այդ լուսանկարներն ուղեկցվեին համապատասխան բացատրություններով՝ վայր, թվական, հանգամանքներ եւ այլ տեղեկություններ: Օրինակ՝ 5-րդ եւ 19-րդ էջերում տպված՝ Զմմառի նորընծայարանի սաների խմբանկարներում հայտնի չէ, թե ո՞ր սքեմաւորն է ապագա կաթողիկոս-պատրիարքը, ովքե՞ր են մյուսները, ո՞ւր եւ ե՞րբ են նկարված եւ այլն:

«Հովհաննես-Պետրոս ԺԸ. Գասպարեան 1927-2011» հուշամատյան-ալբոմը գրական հուշարձան է կանգնեցված արժանավոր ՄԱՐԴ-ու եւ հովվապետի հիշատակին: Հրատարակությունը նաեւ կարեւոր աղբյուր է հայ կաթողիկե համայնքի, լիբանանահայության, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների եւ հարակից բնագավառների 20-րդ դարավերջի պատմությունն ուսումնասիրողների համար:

ԳԵՎՈՐԳ ՅԱԶԸՃՅԱՆ

# «Բանանցը» հիասթափեցրեց իր ժդգույն խաղով

Ֆուտբոլի եվրոպական գավաթների նոր խաղարկության մեկնարկը կրկին հիասթափեցրեց հայ ֆուտբոլասերներին: Անկեղծ ասած, հաշվի առնելով Հայաստանի առաջնությունում թիմերի ցուցադրած խաղի որակը, եվրոպական մրցասպարեզում հայկական ակումբներից առանձնակի սպասելիքներ չկան: Առաջին հերթին դա վերաբերում է «Բանանցին», որն ընթացիկ մրցաշրջանում բավականին անհաջող ելույթներ է ունենում՝ չկարողանալով դրսեւորել խաղային այն որակները, որոնցով թիմի ֆուտբոլիստներն աչքի էին ընկնում անցյալ տարի: Ուստի բնավ էլ անսպասելի չէր երեկ «Հանրապետական» մարզադաշտում Եվրոպայի լիգայի խաղարկության անդրանիկ խաղում Ռուսթավիի «Մետալուրգից» կրած պարտությունը:



Սակայն ցավալին ոչ թե միջին մակարդակ ունեցող թիմից կրած պարտությունն է, այլ այն անորակ ու ժդգույն խաղը, որի ականատեսը դարձանք: Գրեթե մեկ խաղակես ունենալով թվային առավելություն, «Բանանցի» ֆուտբոլիստներն այդպես էլ չկարողացան լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին: Թիմի գործողություններում սրություն չկար, ֆուտբոլիստները գործում էին կաշկանդված, առանց ոգեւորության, հաճախակի սխալվում պարզ իրադրություններում: Դա հատկապես վերաբերում է առաջին խաղակեսին, որի ընթացքում դաշտի տերերը միայն մեկ սպառնալից պահ ստեղծեցին, սակայն Բալաբեկյանը չօգտագործեց գոլ խփելու լավ հնարավորությունը:

Ինչ վերաբերում է հյուրերին, ապա թեեւ նրանք ավելի քիչ էին գրոհում, սակայն ավելի գրագետ էին գործում: 29-րդ րոպեին «Մետալուրգը» կարող էր բացել հաշիվը, եթե գերազանց չգործեր Դոնեցկից հրավիրված դարպասապահ Դմիտրի Նեպոգոդովը: Նախ նա Ռազմաձեի հուժկու հարվածից հետո գնդակը հանեց անկյունային, ապա մոտ տարածությունից մրցակցի գլխի հարվածից հետո որսաց գնդակը: Սակայն 48-րդ րոպեին նա էլ անզոր էր, երբ անկյունայինի խաղարկումից հետո գլխի հարվածով Իրակլի Կոբալիան գնդակն ուղարկեց դարպասը: Ֆուտբոլիստը շատ բուռն տոնեց խփած գոլը, մագլցեց ցանկապատին, որի համար 2-րդ դեղին քարտը ստանալով, անմիջապես հեռացվեց խաղադաշտից՝ ծանր կացության մեջ դնելով թիմակիցներին:

Սակայն նույնիսկ թվային առավելություն ունենալով, դաշտի տերերին չհաջողվեց խուսափել պարտությունից: Ճիշտ է, բաց թողած գոլից հետո «Բանանցը» որոշ չափով ակտիվացավ, վտանգավոր մի քանի պահեր ստեղծեց, սակայն այդպես էլ չգտավ մրցակցի դարպասի բանալին: Պետք է խոստովանել, որ նման խաղով դժվար էր հաջողություն ակնկալել:

# Բենիկ Իսրայելյանը Գինեսի ռեկորդների գրքին արժանի նվաճման հասավ

54-ամյա Բենիկ Իսրայելյանը Գինեսի ռեկորդների գրքում գրանցվելու հայտ է ներկայացրել: Նախկին ծանրորդը աջ ձեռքի միջնամատով բարձրացրեց 116,9 կգ ծանրությունը 20 սմ եւ պահեց 7 վրկ: Նշենք, որ Գինեսի ռեկորդների գրքում նախկինում նման վարժության որեւէ ռեկորդ գրանցված չէ: Դեռեւս 2000-ին Բենիկ Իսրայելյանն այդ վարժությունը կատարելիս բարձրացրել էր 147,5 կգ ծանրություն: Այդ նվաճումը գրանցված է հայկական «Դյուցազնագրքում»:



Բենիկ Իսրայելյանը Գինեսի ռեկորդների գրքի հանձնախմբից ռեկորդ սահմանելու թույլտվություն էր ստացել: Նրա բարձրացրած ծանրությունը պետք է թեթեւ լիներ 104,3 կգ-ից: Սակայն Բենիկը թույլատրելիից 12,6 կգ ավելի բարձրացրեց: Նշենք, որ ռեկորդի գրանցմանը հետեւում էր հատուկ ստեղծված անկախ հանձնախումբը, որը գլխավորում էր Վարդան Թովմասյանը: Մյուս երկու անդամներն էին Գինեսի ռեկորդակիր Արտակ Գրիգորյանը եւ «Ֆիտնես» ակումբի ներկայացուցիչը: Այժմ մինչեւ հուլիսի 11-ը ռեկորդի գրանցման համար անհրաժեշտ բոլոր տեսանյութերն ու փաստաթղթերը պետք է ուղարկվեն Լոնդոն: Հուսանք, որ Գինեսի ռեկորդների գրքում եւս մեկ հայ դյուցազնի անուն կգրանցվի:

# Հարավամերիկացիները սկսում են մրցավեճը

**Այսօր Արգենտինա-Բոլիվիա հանդիպումով մեկնարկում է ֆուտբոլի Ամերիկայի գավաթի 43-րդ խաղարկությունը: Արգենտինայում կայանալիք մրցաշարում պատվավոր մրցանակի համար պայքարը կսկսեն հարավամերիկյան 10 հավաքականներ եւ հրավիրված 2 ընտրանիներ: Այս անգամ էլ մոտ 20-ամյա ավանդույթին հավատարիմ ամերիկացիները հրավիրել են Մեքսիկայի հավաքականին, որը հանդես է գալու երիտասարդական կազմով: 2-րդ հրավիրված հավաքականը Ճապոնիան էր: Սակայն երկրում ուժեղ երկրաշարժի հետեւանքով ստեղծված իրավիճակում ճապոնացիները հրաժարվեցին մասնակցությունից: Ուստի արդեն 4-րդ անգամ մրցաշարին կմասնակցի Կոստա Ռիկայի հավաքականը:**

**Թեեւ Արգենտինայում արդեն 9-րդ անգամ է անցկացվելու Ամերիկայի գավաթի խաղարկությունը, ինչը ռեկորդային ցուցանիշ է, սակայն վերջին անգամ դա տեղի էր ունեցել 24 տարի առաջ: Առավել հաճախակի՝ 14 անգամ հաղթող է ճանաչվել Ուրուգվայի հավաքականը: Արգենտինացիները 13 անգամ են նվաճել Ամերիկայի գավաթը: Վերջին անգամ դա նրանց հաջողվել է 1993-ին Էկվադորում կայացած մրցաշարում: 8 անգամ հաջողությունն ուղեկցել է բրազիլացիներին, ընդ որում նրանք վերջին երկու մրցաշարերի հաղթողներն են: Ընդհանրապես Բրազիլիայի հավաքականը շատ հաջող է հանդես եկել Ամերիկայի գավաթի վերջին 5 մրցաշարերում՝ 4 անգամ (1997, 1999, 2004 եւ 2007-ին) նվաճելով պատվավոր մրցանակը: 2-ական անգամ հաղթող են ճանաչվել Պերուի եւ Պարագվայի ընտրանիները, մեկական անգամ մրցանակն ուղեւորվել է Բոլիվիա եւ Կոլումբիա: Առաջին խաղարկությունը կայացել է 1916-ին Արգենտինայում եւ ավարտվել է ուրուգվայցիների հաղթանակով:**

**Ամերիկայի գավաթի խաղարկության անցկացման ժամկետները դժգոհության տեղիք են տալիս եվրոպական ակումբների ղեկավարներին: Հուլիսին ակումբների մեծամասնությունը հանգստանում է, իսկ հարավամերիկացի ֆուտբոլիստներն այդ հնարավորությունից զրկված են: Մասնագետների մեծամասնությունն ակնկալում է եզրափակիչում ականատես լինելու Արգենտինայի եւ Բրազիլիայի հավաքականների մրցավեճին, խաղադաշտում հետեւելու Մեսի-Նեյմար դիմակայությանը:**

# Տսոնգան անակնկալ մատուցեց

**Թենիսի Ուիմբլդոնի մրցաշարում իսկական մարզական սխրանք գործեց ֆրանսիացի Ժո-Վիլֆրեդ Տսոնգան: Նա դարձավ առաջին թենիսիստը, որն առաջին երկու խաղափուլում զիջելով Ռոջեր Ֆեդերերին, կարողացավ շահել մրցախաղը: Դա իրոք Ուիմբլդոնի մրցաշարի գլխավոր անակնկալն էր: Առաջին երկու խաղափուլերը Ֆեդերերը շահեց 6-3, 7-6 հաշվով: Թվում էր, թե մրցակցության ելքը վճռված է, սակայն ֆրանսիացի թենիսիստն իր մեջ ուժ գտավ փոխելու մրցակցության ընթացքը: Հաջորդ երեք խաղափուլերում նա հաղթեց միեւնույն 6-4 հաշվով:**

**Այսպիսով, Տսոնգան զրկեց Ֆեդերերին Փիթ Սամփրասի ռեկորդը կրկնելու հնարավորությունից, որն Ուիմբլդոնում 7 անգամ հաղթող էր ճանաչվել: Կիսաեզրափակիչում Տսոնգան կմրցի սերբ Նովակ Ջոկովիչի հետ: Վերջինս պայքարից դուրս էր մղել ավստրալացի Բեռնարդ Տոմիչին (6-2, 3-6, 6-3, 7-5):**

**Կիսաեզրափակիչի մյուս զույգը կազմել են Ռաֆայել Նադալն ու Էնդի Մարեյը: Հետաքրքրական է, որ անցյալ տարի էլ մրցակիցներն Ուիմբլդոնում հանդիպել էին այս փուլում: Այն ժամանակ Մարեյը պարտվել էր: Գուցե այս անգա՞մ ժպտա բախտը Մարեյին, որը դեռեւս Ուիմբլդոնում եզրափակիչ չի մտել: Մարեյը քառորդ եզրափակիչում պարտության մատնեց իսպանացի Ֆելիսիանո Լոպեսին (6-3, 6-4, 6-4), իսկ Նադալը հաղթեց Մարդի Ֆիշին (6-3, 6-3, 5-7, 6-4):**



# Հայ պատանի շախմատիստները գերազանցում են մրցակիցներին

**Շախմատի Հայաստանի պատանեկան հավաքականը գերազանց է հանդես գալիս Մոսկվայում անցկացվող Վլադիմիր Դվորկովիչի 6-րդ հուշամրցաշարում: 6 տուրից հետո Հայաստանի հավաքականը 11 միավորով վստահորեն գլխավորում է մրցաշարային աղյուսակը: 2-րդ տեղում 8 միավորով Ադրբեջանի հավաքականն է: 7-ական միավոր են վաստակել Չինաստանի եւ Ուկրաինայի ընտրանիները:**

**Մրցաշարին մասնակցում են 8 հավաքականներ, որոնք միմյանց հետ մրցում են 2 շրջանով: Յուրաքանչյուր հավաքականում ընդգրկված է 4 շախմատիստ, որոնցից առնվազն մեկն աղջիկ է: Մասնակիցները 12-17 տարեկան են: Յուրաքանչյուր խաղատախտակի վրա մրցակիցները միմյանց հետ երկու պարտիա են անցկացնում սեւ եւ սպիտակ խաղաքարերով:**

**Հայաստանի հավաքականը գլխավորում է միջազգային գրոսմայստեր Արսեն Եղիազարյանը: Նա թիմում ընդգրկել է Կարեն Գրիգորյանին, Հովհաննես Գաբուզյանին, Տիգրան Հարությունյանին եւ Սուսաննա Գաբոյանին:**

**Առաջին օրը հայ շախմատիստները միեւնույն 3-1 հաշվով երկու անգամ հաղթեցին Չինաստանի հավաքականին: Կարեն Գրիգորյանը երկու պարտիաներում էլ հաղթեց Լու Շանգլեյին, Հովհաննես Գաբուզյանն էլ պարտության մատնեց Յի Վեյին: Տիգրան Հարությունյան-Չու Վեյ Չիաո, Սուսաննա Գաբոյան-Վանգ Յուե մրցախաղերում մրցակիցները մեկական հաղթանակ տոնեցին:**

**Մրցումների 2-րդ օրը մեր շախմատիստները 3,5-0,5 եւ 4-0 հաշիվներով ջախջախեցին ղազախներին: Միակ կես միավորը Սուսաննա Գաբոյանի հետ անցկացրած 2-րդ պարտիայում վաստակեց Դինա Ասաուբաեւան: Գրիգորյանը հաղթեց Էրկեն Կոզգանբաեւին, Գաբուզյանը պարտության մատնեց Ալիբեկ Իգամբերգենովին, իսկ Հարությունյանն առավելության հասավ Այան Աիմետովի նկատմամբ: Նշենք, որ նախորդ օրը նույնպիսի հաշիվներ էին գրանցվել Ադրբեջանի եւ Ղազախստանի հավաքականների մրցավեճում:**

**Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Հայաստանի եւ Ռուսաստանի հավաքականների մրցավեճը: Առաջինում գրանցվեց ոչ-ոքի: Մեր թիմից հաղթեց միայն Կարեն Գրիգորյանը Ուրի Ելիսեեւի հետ մրցավեճում: Գաբուզյանն ու Հարությունյանը հաշտություն կնքեցին համապատասխանաբար Վյաչեսլավ Տիլիչեեւի եւ Կոնստանտին Նիկոլոգորսկու հետ, իսկ Գաբոյանը պարտվեց Լյուբով Կոստիցինայից: Իսկ ահա 2-րդ մրցախաղում հայերը հաղթեցին 3-1 հաշվով: Կրկին հաջող խաղաց Գրիգորյանը՝ 2-րդ անգամ պարտության մատնելով մրցակցին: 2-րդ հաղթանակն իր թիմին պարգեւեց Գաբուզյանը, իսկ Հարությունյանն ու Գաբոյանը մրցակիցների հետ խաղաղ դաշն կնքեցին:**




# Հաղթական տուր

**Ալբենայի շախմատի մրցաշարի 5-րդ տուրը հաղթական էր հայաստանցի շախմատիստների համար: Ավետիք Գրիգորյանը սեւերով հաղթեց Դենիս Կադրիչին, իսկ Տիգրան Սիմոնյանն առավելության հասավ Էլի Կոպելեւիչի նկատմամբ: Իսկ ահա բուլղարահայ Վալենտին Փամբուկչյանը պարտվեց Բոգիդար Իվանովին:**

**5 տուրից հետո Ավետիք Գրիգորյանը վաստակած 4,5 միավորով բաժանում է 2-9-րդ տեղերը: Նա ընդամենը կես միավոր է զիջում մրցաշարի միանձնյա առաջատար Մաքսիմ Ռոդշտեյնին: Վերջինս 5-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Անդրաս Սաբոյի նկատմամբ: Տիգրան Սիմոնյանն ունի 4 միավոր, Վալենտին Փամբուկչյանը՝ 3: 6-րդ տուրում Գրիգորյանը սպիտակներով կխաղա Դմիտրի Սվետուշկինի հետ:**

# Վերջնագծում Պետրոսյանը վերելքով է խաղում

**Ռումինիայի Էֆորիա քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի վերջին տուրերում վերելքով է հանդես գալիս Սուրեն Պետրոսյանը՝ բարելավելով մրցաշարային վիճակը: Նախավերջին՝ 10-րդ տուրում Պետրոսյանը կրկին հաջող խաղաց՝ հաղթելով Իզաբելա Պետցանին: Դա Պետրոսյանի 3-րդ անընդմեջ հաղթանակն էր, որի շնորհիվ հայ շախմատիստը վաստակեց 7 միավոր: Ավարտական տուրից առաջ Պետրոսյանն ընդամենը կես միավոր է զիջում մրցաշարի միանձնյա առաջատար Սերգեյ Տիվյակովին: Վերջինս հաղթեց Կոստին Միրոնին: 7 միավոր ունեն նաեւ Ալեքսեյ Ֆյոդորովը, Մարիուս Մանոլաչեն, Վադիմ Մալախատկոն: Ֆյոդորովը հաղթեց Բելա Բադեային, Մալախատկոն ու Մանոլաչեն հաշտություն կնքեցին: 11-րդ տուրում Պետրոսյանը կմրցի Վադիմ Մալախատկոյի հետ: Տիվյակովի մրցակիցը կլինի Ալեքսանդր Օգլեզնեւը:**

# ՖԻԴԵ-ի նոր նորամուծությունը

ՖԻԴԵ-ն որոշել է 2012-ի հունվարի 1-ից հրապարակել նաեւ արագ շախմատի եւ կայծակնային մրցախաղի դասակարգման ցուցակները: Ինչպես հայտնի է, դասական շախմատի դասակարգման ցուցակները հրապարակվում էին երկու ամիսը մեկ: Հուլիսի 1-ից շախմատասերները հնարավորություն կունենան շախմատիստների վարկանիշներին ծանոթանալ յուրաքանչյուր ամիս:

# 45 մլն Նեյմարի համար

Եվրոպական հինգ ակումբներ՝ Մադրիդի «Ռեալը», «Բարսելոնը», «Չելսին», «Մանչեսթր Սիթին» եւ «Անժին» պատրաստ են բրազիլական «Սանթոսում» հանդես եկող Նեյմարի համար 45 մլն եվրո վճարել: Այս մասին հայտարարել է «Սանթոսի» նախագահ Լուիս Ռիբեյրոն:

«Մենք չենք ցանկանում վաճառել Նեյմարին, սակայն նրա պայմանագիրը հնարավորություն է ընձեռում ֆուտբոլիստին տեղափոխվելու եվրոպական ակումբ: 5 ակումբներ ցանկանում են հանդիպել Նեյմարի հետ, եւ հավանաբար մենք դա թույլատրենք», նշել է ակումբի նախագահը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Ծովարշավ

# Ինդոնեզիայից մինչեւ Հնդկաստան

Այնուամենայնիվ որքա՞ն հետաքրքրական էր խորհրդային ժամանակներում, երբ մտավորականությունը, պատահում էր, հավաքվում էր խոհանոցում օղու, երբեմն էլ թեյի շուրջը եւ սեկսոտների աչքից հեռու (գաղտնի աշխատակից), մեծագույն կրքով ծայրեծայր քննադատում էր ե՛ւ հնգամյակը, ե՛ւ պետպլանը, ե՛ւ կարգախոսները... Ի դեպ, կարգախոսներն իրոք ցանցառություններ էին, ինչպես օրինակ՝ «Հնգամյակը՝ երկու տարում» կամ «Ներկայիս սերունդը կապրի կոմունիզմի օրոք»: Հիշում եմ, Կամչատկայում, որտեղ, կարծում եմ, սեկսոտներ ընդհանրապես չկային, ինչ-որ մեկը բարձրացել էր տանիք, որտեղ տեղադրված էր ահռելի վահանակը՝ մոտակա կոմունիզմի մասին կարգախոսով, եւ «ներկայիս սերունդը» բառերից հետո ավելացրել էր՝ «ուզի, թե չուզի»: Բայց վերադառնանք հնգամյակներին եւ պետպլանին, ուր բանն այնտեղ էր հասել, որ այդ հարայ-հրոցի մեջ արդեն բուն «պլան» բառը նույնպես չէինք ընկալում: Ծաղրանքով էինք խոսում պլանային տնտեսության մասին: Բայց ի՛նչն է զարմանալին: Ռուսները մի խոսք ունեն՝ ջրի հետ երեխային էլ թափեցին: Արդեն անցել էինք հենց «պլան» բառը ծանակելուն: Այնինչ այն լատիներեն նշանակում է հարթություն: Հարթությունների վրա գծում էին ինչ-որ մտահղացումներ, մասշտաբներ եւ այլ նման բաներ: «Պլան» բառի բազմաթիվ բացատրությունների մեջ ամենից տարածվածը հետեւյալներն են. մտահղացում, նախագիծ, որեւէ աշխատանքի հիմնական գծերը, որեւէ ծրագրի իրագործման հաջորդականությունը: Իմաստուն կորյակների եւ չուկչաների, ալեուտների եւ իտելմենների ողջ փիլիսոփայությունը հանգում է նրան, որ ձմռանը ցուրտ է, իսկ ամռանը՝ տաք: Այդ իսկ պատճառով էլ պետք է մտածել (պլանավորել), թե ինչ անել, որ ձմռանը չմեռնես: Պարզվում է, կարճատեւ ամառը պետք է օգտագործել այնպես, որ կարողանաս ձմեռն անցկացնել: Այնպես որ, առանց պլանի ոչ մի կերպ չի կարելի: Պարզապես չի կարելի այն գռեհկացնելով հասցնել աբսուրդի:

Եվ իմանալով այս ամենի մասին՝ մենք պլանավորել էինք մեր աշխարհաշրջը՝ սկսած երթուղուց: Այսինքն՝ ամենագլխավորից: Մեզ հանդիմանում են: Անունները հետո կհրապարակեմ: Խոսքն այն մարդկանց մասին է, որոնք լավատեղյակ մեր երթուղուն, առանց հանդիմանելու ասում են. «Մի՞թե հնարավոր չէր շրջանցել այդ սարսափելի հատվածը»: Այսինքն, ողջ Հարավարեւելյան, Հարավային եւ Հարավարեւմտյան Ասիան՝ իր նեղ Արաբական ծովով: Մենք այդ ամենի մասին գիտեինք: Ե՛վ պասսատների, ե՛ւ հանդիպակաց հոսանքների, ե՛ւ նույնիսկ ծովահենների մասին: «Կիլիկիա»: Վերադարձ» (երրորդ հատոր) գրքում ես տեղադրել եմ ներկայիս աշխարհաշրջի երթուղին պատկերող քարտեզ: Իսկ այդ քարտեզը գրված, գծված ու տպագրված էր «Արմենիա»-ի մեկնարկից դեռ հինգ տարի առաջ: Մենք այն ժամանակ արդեն գիտեինք, թե ինչ բարդությունների էինք հանդիպելու երթուղու ավարտին: Ո՛չ, չէր կարելի շրջանցել: Հազար անգամ կրկնել եմ՝ այս շուրջերկրյա նավարկությունը մերկ ու ինքնանպատակ չէ, եւ ո՛չ էլ զուտ սպորտային: Սա ծովարշավ է՝ Սփյուռքի անհավատալիորեն դժվար ճամփաներով: Եվ եթե հրաժարվեինք Հարավարեւելյան ու Հարավարեւմտյան Ասիայի



հատվածից, ապա պարզապես կկորցնեինք հարգանքը սեփական անձի հանդեպ: Երկրագնդի, Համաշխարհային օվկիանոսի հենց այս մասում են սկիզբ առել սփյուռքի առաջին ու ամենադժվար ծովային ուղիները: Չէ՞ որ 387 թվականին հենց 27-ամյա Մեսրոպ Մաշտոցի աչքի առաջ մեր նախնիները, մի ակնթարթում վերածվելով փախստականների, ցրվեցին Հայկական բարձրավանդակի ճամփաներով: Իսկ ծովային եւ օվկիանոսային անցումների հիմնական մասը սկսվեց հենց այստեղ, որտեղ հիմա վաղուց լողում է «Արմենիա»-ն: Եվս մեկ անգամ հիշենք աշխարհագրությունը: Կարծում եմ, դա պետք է: Ճավայի ծով, Հարավչինական ծովի ողջ արեւմտյան մասը, Մալակկայի նեղուց, Սիամի ծոց, Բակբո, Անդամանյան ծով, Բենգալյան ծոց, Արաբական ծով: Բայց չէ՞ որ այս ջրերը ողողել են բազմաթիվ երկրների ափեր, որտեղ հայեր են հիմնավորվել: Եվ դրանց մեջ, իհարկե, առաջին հերթին՝ Հնդկաստանը: Եվ, ինչպես իմացանք Յակոբ Շամիրի տապանագրից, ոչ միայն նա, այլեւ գործնականում մեր բոլոր հայրենակիցները ծովով ու ցամաքով եկել են ոչ թե Հայաստանից, ոչ թե Արցախից (ինչպես Հովսեփ-Հովհաննես Ամիրխանյանը), այլ Սփյուռքից: Եվ դա սկսվեց 16-րդ դարի վերջին, երբ հրեշ Շահ-Աբբասը դուրս քշեց Նախիջեւանի հայերին, մեծ մասին՝ Ջուղայից: Ի դեպ, ինչո՞ւ ենք մենք համառորեն Նախիջեւանի Ջուղան կոչում Հին Ջուղա: Չէ՞ որ Սպահան քշված ջուղայեցի հայերը իրենց կառուցած բնակավայրը Նոր Ջուղա կոչեցին ի հիշատակ նախնիների հայրենիքի: Ինչպես որ Դոնի Ռոստովում Նոր Նախիջեւանը, եւ դրանով արդեն տարբերակեցին հարազատ օջախի իսկական անունից: Իսկ Ջուղան մենք այսօր պետք է կոչենք Նախիջեւանի, հիշելով այն մասին, որ 21-րդ դարի վանդալները հայկական հողի երեսից ջնջեցին ոչ թե պարզապես խաչքարեր, որոնք համաշխարհային տաճարաշինության գլուխգործոցներ են, այլ ավանդական շիրմաքար՝ հայերի գերեզմաններին: Եվ վանդալները դա արեցին, օգտվելով մեր տրամաբանական պասիվությունից, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կուրությունից ու խլությունից: Այսօր մենք պետք է աշխարհին ցույց տանք հայկական հետքերի բոլոր փաստարկները, որոնք բացառիկ վկայություններն են այն բանի, որ գործնականում բոլոր հայերն այստեղ ծնունդով եղել են Նախիջեւանի Ջուղայից: Ինչ վերաբերում է այս հատվածում «Արմենիա»-ի երթուղու դժվարություններին, ապա մենք դա չենք էլ ժխտում: Իրոք այն ծանր է եւ ավելի կծանրանա հետո:

Բավական է նայել հիմա, թե ինչ է կատարվում շուրջը Բենգալյան ծոցի ջրեր մտնելուց հետո: Ահա արդեն չորրորդ օրն է, ինչ նավը, կարելի է ասել՝ կանգնած է տեղում, այսպես ասած՝ բուքսում է: Այդ ընթացքում քամին աննշան իսկ չի փոխել իր հանդիպակաց ուղղությունը: Եվ դեռ հանդիպակաց հոսանքն էլ է հավելվել: Այդպես էր Մալակկայի նեղուցում եւ այդպես շարունակվում է հիմա: Նման օրերին սիրտդ համակվում է տհաճությամբ: Վերջին հաշվով, խոսքը գրաֆիկի մասին է, այդ նույն պլանի, պայմանավորվածությունների: Իսկ մենք արդեն շարժիչի հետ էլ հույսեր չենք կապում: Անցնում են մեր կողքով սարի պես ահռելի նավեր, ու նախանձից պայթում ես: Հզոր շարժիչները՝ ալբատրոսի թեւերի նման պտուտակներով, կատաղի արագությամբ առաջ են անցնում, հաճախ շչակով ողջունելով մեզ:

Եվ սակայն մենք չէինք կարող գնալ այլ երթուղով: Բանը միայն այն չէ, թե պետք է իջնել այս կամ այն ափին ու նկարահանել հայկական հուշարձանները: Միեւնույնն է, այդ ամենը ինքներս չենք կարող անել: Թեեւ այդ խնդիրը փորձում ենք լուծել դեսպանությունների, հյուպատոսությունների եւ հայկական թեմերի առաջնորդների օգնությամբ: Այն, ինչ չենք կարողանա հիմա նկարել, կանենք հետո, պարտադիր չէ, որ նավարկելիս անենք: Չէ՞ որ առանց բացառության 1700 եկեղեցիներ նկարահանելու գաղափարն ինքնին ե՛ւ կարեւոր է, ե՛ւ անգին, ե՛ւ իրական՝ իրագործման հնարավորությամբ: Նույնքան կարեւոր է շատ դեպքերում գոնե նավակողով հպվել այն կղզիների, մայրցամաքների, երկրների ափերին, որտեղ ապրել եւ ապրում է Սփյուռքը: Հպվել նավակողով, որի վրա են Մեսրոպյան տառերը, հայկական խաչը, հավերժության նշանը եւ հայրենիքի անունը:

Մեր հաջորդ հանգրվանը հնդկական Կոչին նավահանգիստն է: Դրա համար պետք է լայնքով կտրել Բենգալյան ծոցը, շրջանցել Շրի Լանկա կղզին: Հիշում եմ ինչպես հիմա՝ 1973 թվականին թերթերում կարդացի, որ Ցեյլոն կղզին վերանվանվել է Շրի Լանկա: Մի տեսակ ափսոս չէր: Ոնց որ թե երեսունյոթ տարի գիտեի Ցեյլոն կղզի, որի շատ թանկարժեք թեյը սիրում էի, մեկ էլ հո՛պ՝ Շրի Լանկա: Բայց դա երկար չտեւեց, քանզի թեյն առաջվա պես նախկին անունն ունի եւ նախկին որակը:

Սակայն մինչեւ Շրի Լանկա դեռեւս մի ողջ հավերժություն կա: Բենգալյան ծոց կոչվածը պայմանականորեն կարելի է ծոց համարել: Նրա մակերեսը հինգ Սեւ ծով կընդգրկեր: Մի քանի խոսք ծոցի անվան մասին: Երբ արդեն վերջնականապես պարզ էր շուրջերկրյա նավարկության երթուղին, ես երեք ամիս շարունակ նյութեր էի հավաքում դրան հարող աշխարհագրական կետերի կամ անունների մասին: Միաժամանակ գրառումներ էի կատարում: Եթե դրանք բոլորն օգտագործեմ, բազմաթիվ հատորներ կստացվեն: Ի դեպ, հետաքրքիր շատ բաներ են դուրս մնում ռեպորտաժներից, եւ գիտեմ՝ գրքում էլ չեն ընդգրկվի: Շա՜տ ափսոս: Ջուր կորչելու են: Մի՞թե հետաքրքիր չէ իմանալ, որ բենգալական է կոչվում ոչ միայն ծոցը: Եվ նույնիսկ ոչ միայն կրակը: Ի դեպ, հավանաբար քչերը գիտեն, որ իմաստուն հնդիկներն այդ նույն բենգալական կրակը, այսինքն՝ պիրոտեխնիկական խառնուրդը, օգտագործում էին բոլորովին էլ ոչ տոնածառի մոտ զվարճանալու համար (ի դժբախտություն խեղճ հրշեջների), այլ լուսային ու գունային ազդանշանման: Այդ խառնուրդը լցնում էին սնամեջ բամբուկե փողերի մեջ ու մի ծայրից վառում:

Կա բենգալերեն լեզու, որով այսօր խոսում է Բանգլադեշի ժողովուրդը: Ընդհանրապես կա Բենգալիա երկիր՝ ընկած Հնդկաստանի, Բանգլադեշի, Պակիստանի տարածքում: Այդ ամենը մինչեւ 1757 թվականը մեկ երկիր էր՝ մեկ ընդհանուր փիլիսոփայությամբ ու մշակույթով: Երբ եկան բրիտանացիները, երկիրը կոչեցին Բրիտանական Հնդկաստան: Եվ 190 տարի անց, 1947 թվականին այդ երկիրը մաս-մաս արեցին, եւ այն ժամանակից ի վեր ռումբեր են պայթում, արյուն է հեղվում: Դա հիմա կոչվում է «քաղաքակրթություն բերել «վայրի» երկիր»: Թեեւ, իհարկե, Հնդկաստանը հաղթեց իրեն պարտադրված պատերազմում:

Այո, իրոք բարդ է մեր երթուղին: Բարդ է եւ այն երկրների պատմությունը, որոնք գտնվում են մեր ճանապարհին: Մենք դրանք մանրազնին ուսումնասիրել ենք: Տեղյակ ենք նույնիսկ, որ անգլիացիք տարակուսած հարցնում էին հնդիկներին, թե ինչի՞ց են դժգոհ: Չէ՞ որ իրենք բերել են գիտություն, ուսում: Ինչին հնդիկները պատասխանում էին հնդկական փիլիսոփայությամբ. «Ի՞նչ օգուտ չարին ուղղված գիտելիքից»: Իսկ երբ ասում էին՝ բայց չէ՞ որ մենք ձեզ լույս ու լուսավորություն ենք բերել, ապա պատասխանը նույն հնդկական փիլիսոփայությունն էր. «Ի՞նչ օգուտ ճրագից, եթե ծածկված է կավե ամանով»: Երբ Լոնդոնում հարցրեցին Մահաթմա Գանդիին, թե ինչպե՞ս է ստացվում, որ վատ զինված ժողովուրդը հաղթում է հզոր կայսրությանը, Մեծ Ոգին (Մահաթման անունն այդպես է թարգմանվում) պատասխանեց մեկ նախադասությամբ. «Սկզբում ձեզ արհամարհում են, հետո ծիծաղում են ձեզ վրա, հետո ձեզ հետ կռվում են, եւ հետո դուք հաղթում եք»: Ահա այսպիսին է ժողովրդի փիլիսոփայությունը այն երկրի, որտեղ մեծագույն դժվարությամբ, հաղթահարելով հանդիպակաց քամին ու հանդիպակաց հոսանքը, ուղղվում է «Արմենիա» առագաստանավը:

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**
**Հնդկական օվկիանոս**

«Էկոնոմիկա եւ Իրավունք»
ամսագիր

**Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից**

- **Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն**
- **«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար**

*Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81*

**Վաճառվում է**
**Daewoo Matiz Best**
մակնիշի ավտոմեքենա 2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 3 600 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները եւ ապակիները էլեկտր., գերազանց վիճակ է:
**Հեռ.՝ (094) 577-578**

**Վաճառվում է**
**LADA Priora**
մակնիշի ավտոմեքենա, 2008 թվականի արտադրության, 2010 թվականի վաճառք: Գտնվում է գործարանային երաշխիքի մեջ: Վազքը՝ 13 000 կմ, գույնը՝ սեւ մետալիկ, հեչբեք: Ունի՝ կոնդիցիոներ, անվտանգության բարձիկ, բորտ համակարգիչ, հայելիների եւ ապակիների (մուտք) էլեկտրոնային կարգավորում, բարձրակարգ աուդիո համակարգ՝ Bluetooth-ով եւ iPhone/iPod միացումով: Տրվում են նաեւ 4 ձմեռային անվադողեր՝ համարյա նոր վիճակում:
**Հեռ.՝ (094) 401-337**

**Վաճառվում է**
**Volkswagen Jetta**
**մակնիշի ավտոմեքենա, արծաթափայլ, արտ. 2000 թ., վաճ. 2001 թ., շարժիչը 2 լ., փոխանց. տուփը ավտոմատ, սրահը կաշվեպատ, դիմացի նստատեղերը տաքացվող, հայելիները, լյուկը եւ ապակիները (մուտք) էլեկտր., ունի կոնդիցիոներ: Գերազանց վիճակ: 095 02 66 19:**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 30.6.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: